



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material









83

1725-6

Ն. ԱՊՐՈԼԵՎ

087.1:91

ԹԱՎՈՒՏՅՆԵՐՈՎ

ՈՒ

ԾՈՎԵՐՈՎ

17004

IRISH LAND

1860  
1861  
1862  
1863  
1864

Ն. ԱՊՐԵԼԵՎ

ԹԱՎՈՒԹՅՈՒԹՈՎ  
ՈՒ  
ԾՈՎԵՐՈՎ

A  $\frac{\pi}{39514}$



Հ. թ. № 1249:

Գրառեալվար № 2904 (բ):

Տիրաժ 3000

---

Դիմուրամի առաջին տպարտոն Վազգարշակառութ  
Պատվեր № 51:

ՀԵՆՐԻ ՍՏԵՆԼԻՒ  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ



Հ. թ. № 1249.

Գրառելված № 2904 (ը):

Տիբաժ 3000

Պետքանի առաջին տպարան Վագորչակառում  
Պատվեր № 51:

# I.

Ո՞վ եր Հենրի Ստենլին.—Վաղ մանկության տպավորությունները.—Անապատան յերեխանների տաճը.—Փախուս.—Թափառումներ.—Լիվերպուլում անցրած որերը.—Նոր-Ռիջեան զնալը:

Տասնիններորդ դարը աշխարհագրական գլուխերի շըրջան եւ Յեվրոպական յերկրները, վորոնք մինչ այդ շատ ինքնամփոփ վիճակում ելին, զարդացնում են իրենց նավատորմիզը, նոր ծովալին ճանապարհներ, նոր յերկրներ են վորոնում և ուսումնասիրում են այդ յերկրների բնակիչներին:

Այս շարժման, տեղահանության պատճառները շատ են խորը, սակայն ամենից գլխավոր պատճառն արդյունաբերության զարգացումն եր: Պետք եր շուկա, արտադրած ապրանքների սպառող գտնել, հաճախ նոր յերկրներ գտնող մարդիկ իրենք այդ պատճառները չեն իմացել, այլ միայն գիտական նպատակներով են ղեկավարվել: Այդ ժամանակների գիտուններն ու հետախուզուցները այնքան ել նման չելին մեր ժամանակների կարինետալին գիտուններին: Դրանք համարձակ ճանապարհորդներ ելին, խիզախ ու տոկուն մարդիկ, վորոնք վոչ մի զրկանքից, հաճախ նույն խսկ մահից չելին վախենում:

Այդ ժամանակի ամենախոշոր գիտնական ճանապարհորդներից մինն եր Հենրի Մորտոն Ստենլին: Ստենլին ծնվեց Դենբիգի (Անգլիայում) մոտ գտնվող մի փոքրիկ գյուղում, ֆերմեր Թոուլանդի աղքատիկ ընտանիքում, 1841 թվին: Նա ապորինի զավակ եր: Նախնական անու-

նը—Զո՞ն Բոռւլանդ—նա ստացավ իր մոր ամուսնուց։ Հայտնի չե, թե նրա հարազատ հայրն ով ե յեղել։ Յերբ Զո՞նի 17 տարին լրացավ, նրան սկսեցին Հենրի Մորտոն Ստենլի անվանել։ Սա այն վաճառականի անունն ե, վոր վորդեգրեց հետագալի հոչակավոր ճանապարհորդին։

Այս մարդը, վոր Ստենլիի հայրն եր համարվում, մեռավ նրա ծնունդից յերկու շաբաթ հետո, իսկ մայըը հեռացավ, թողնելով մանկանն իր պապ Մովսես Պարքիի մոտ։ Ստենլին իր կյանքում մոր հետ միայն յերկու անգամ տեսնվեց։ Նրանք իրար միշտ խորթ մնացին։

Պապ ու թոռնիկ ապաստան ելին գտել այն փոքրիկ տան տանիքում, ուր Հենրիի քեռիներն ելին ապրում, սակայն տանիքի բնակիչները բնավ չելին շփում վարի սենյակների համեմատաբար ունեոր բնակիչների հետ։ Տանիքից առանձին ճանապարհ կար դեպի մեծ այգին։ Յերեխան այս պարտիզում շատ ժամանակ ե անցըել իր պապիկի հետ։

Հենրիի հիշողության մեջ միշտ պահպանվեց պապի սափրած, բարի դեմքը, նրա լիքը կազմվածքը և նույն իսկ «թափշ» ըելտուզն<sup>1</sup> ու վորսորդական պարեգուը (καφτան), վոր համարյա միշտ կրում եր։ Նույն իսկ իր կյանքի վերջին որերում Ստենլին հիշում ե, թե ինչպես ինքը կանգնում եր պապիկի ծնկների մեջ, իսկ սա ըըռնած նրա թաթիկը, տառեր եր գրել տալիս քարեգրչով։

Հենրին այս մոտիկ մարդուց ել զրկվեց։ Նա իր պապի մահվան հանգամանքներն այսպես ե հիշում,—մի անգամ ինքը ջրով լի մի մեծ գավաթ կոտրեց։ պապը նրան սպառնաց մատով, ասաց, վոր «լավ ծեծ ե տալու» ու գնաց դաշտը։

Սակայն նրան չեր վիճակվել պատժել իր անզգուց թոռնիկին, վորովհետեւ այնտեղ ել հանկարծ վատացավ։

<sup>1</sup> Կաշեպատ շալվար, վոր հագնում են ձի նստելիս։ Յ. թ։

Նրան չկարողացան նույն իսկ կենդանի տուն հասցնել և  
դաշտումն ել մեռավ:

Պապի մահից հետո ազգականները Ստենլիի դաստիա-  
րակության գործը հանձնեցին Պրելս ծերերին՝ շաբաթա-  
կան մի կրոն վարձատրությամբ: Շուտով Պրելսն ու իր  
կինը տեսան, վոր ալդ վարձատրությունը շատ ե քիչ և  
պահանջեցին ավելցնել: Ազգականները հրաժարվեցին  
վճարն ավելցնել: Ալդ ժամանակ Պրելսները վճռեցին լե-  
րեխալին տալ անապաստանների տունը, սակայն իրենց  
վորոշման մասին նրան վոշինչ չասացին:

Անապաստանների տունն ընկնելու մանրամասնու-  
թյուններն ինքը Ստենլին այսպես ե պատմում:

Մի անգամ Պրելսի տղա Դիկը մոտենալով Հենրիին,  
թեից բոնեց ու հավատացրեց, վոր մորաքրոջ մոտ հուկ-  
են գնալու: Շատ լերկար գնացին: Հենրին այլես վոտնե-  
րը փոխելու ուժ չուներ: Դիկը նրան շալակեց ու ամեն  
տեսակ խոստումներով հանգստացնելով, առաջ գնաց: Այս-  
պիսով նրանք հասան մի հսկայական տան, վորի վան-  
դակապատ դռնակի մոտ Դիկը կանգ առավ ու զանգահա-  
րեց: Դուրս լեկավ մի «խոժուադեմ, ոտար» մարդ: Ալդ  
մարդն իսկույն ներս առավ շվարած ու ընդդիմացող Հեն-  
րիին ու գոնակը փակեց: Դիկն իզուր եր աշխատում հա-  
մողել լերեխալին, թե շուտով վերադառնալու լե մորա-  
քրոջ հետ: Հենրին ամեն ինչ հասկացավ և իր կյանքում  
առաջին անգամ զգաց կատարյալ միայնակության ամբողջ  
սարսափը: Սա նրա առաջին վիշտն եր: Ալդ սարսափելի  
տունն անտուն լերեխանների ապաստարանն եր: Սկզբի  
որերում լերեխան ժամերով լաց եր լինում: Ալդ նրան  
թեթևություն եր պատճառում: Արտասուքը կարծես վրեժ  
եր անսիրտ Դիկից, վոր Հենրիին այնպիսի խաբելությամբ  
այս ահազին բանտն եր նետել:

Ահա թե Ստենլին ինչ ե պատմում ապաստարանի  
մասին. «Մենք, ապաստարանի բոլոր սաներս, սկամորթ

ստրուկների դրության մեջ ելինք։ Դաստիարակը մեզ չեր խնայում և ամենափոքրիկ առիթ անգամ բավական եր, վոր ծեծը կարկուտի պես տեղար մեզ վրա։ Հաճախ չեցինք ել հասկանում, թե մեզ ինչու յե պատժում։ Բայց յերբ նա մեզ ծեծում եր ձեռքով, այդ՝ իհարկե ավելի լավ եր, քան ճիպոտի, քանոնի կամ փայտի հարվածները։ Սակայն թե այս, թե այն նա միշտ ձեռքի տակ ուներ։ Նա ծեծում եր անխնա և դադարում եր միայն այն ժամանակ, յերբ կամ ձեռքն եր հոգնում կամ մեր մարմինն եր ամրողջապես կապտում, կոշտանում։

«Հիշում եմ իմ առաջին պատիժը, շարունակում ե Ստենլին։ Ինելու գնալուց առաջ դաստիարակը մեզ համար ս. գրքից մի գլուխ կարդաց, վորից հետո հանկարծ հարցրեց ինձ, թե ինչ եր փարավոնի յերազները մեկնողի անունը։

— Հովվիես,—պատասխանեցի յես։

— Ի՞նչ։

Յես կրկնեցի։

— Ուզում ես ասել Հովսեֆ, —ուղղեց նա։

— Ալո, Հովվիես։

Յես սխալս չելի նկատում։ Նա կատաղեց. այսու վոյինչ չբացատրեց, ձեռքը մի ճիպոտ առավ ու հրամայեց մերկանալ։ Յես սարսափից մնացի անշարժ։ ամեն տեսակ զգացմունք պաշարեց ինձ. —սարսափ, զարմանք ու հուղմունք։

Այդ ժամանակ նա վրա ընկավ, կատաղությամբ դուրս քաշեց հագուստու ու հարվածներ տեղաց վրաս, վորոնքինձ վայր գլորեցին։ Յեվ այսպիսի դեպքեր մեր ապատարանում սովորական ելին։

Ապատարականի տղաների թիվը յերեսուն եր։ Մեծ քարե տան այս թշվառ, կեղտոտ հագնված ու մաշված բանտարկլալները կտրված ելին աշխարհից։ Նրանք վոչ

միայն չելին մասնակցում կլանքին, այլ և չգիտելին, թե  
ինչ ե կատարվում դպրոցի պատերից դուրս:

Ապաստարանի կլանքի միորինակությունը փոխվում  
եր միայն տարվա լեզանակների իրար հաջորդելու հետ:  
Մեղ զբաղեցնողն անցած կամ գալիք ծեծն եր:

Հենրին նույնիսկ այն ուրախությունը չուներ, վոր  
յերբեմն զգում ելին նրա ընկերներն՝ ազգականների ալ-  
ցելության ժամանակ:

Յերբ Հենրին 12 տարեկան դարձավ, մի անգամ նը-  
րան ասացին, թե մալրը տեսության ե լեկել, հետն ել  
յերկու լեռեխաններ: Այն միտքը, թե ինքն ել մալր, յեղ-  
բալր, քուլր ունի, նրան անշափ ուրախացրեց. բայց հիա-  
սթափությունն ավելի մեծ լեղավ: «Ներս մտավ, պատմում  
ե Ստենլին, մի բարձրահասակ կին, ու մազերը ծոծրա-  
կին կապած»: Նրա սառը, խորաթափանց հայացքից լեռե-  
խան շփոթվեց, վախեցավ: Նա հիշեց իր անգիր արած  
պատվիրանը — «պատվիր քո հորն ու մորը», և հենց արդ  
վալրկյանին ել զգաց, վոր այդ կնոջն ինքը վոչ սիրել, վոչ  
ել հարգել կարող ե: Յերազում եր կարոտով մորը փա-  
թաթվել, սակայն տեղից շարժվել անգամ չկարողացավ:

Հենրիի մալրը կարճ ժամանակ մնաց ու գնաց, ա-  
պաստարանում թողնելով խորթ քրոջը: Հենրին քրոջը մո-  
տիկանալ չկարողացավ, վորովիետե այդտեղ տղաներին ու  
աղջիկներին իրարից շատ հեռու ելին պահում: Միակ  
բանը, վոր Հենրին ստացավ ապաստարանում, այդ գիտե-  
լիքների այն փոքրիկ պաշարն եր, վոր չնայած վատ դրած  
ուսուցման գործին, նա այնուամենալիվ կարողացավ  
ստանալ այդտեղ:

Հենրին հեշտ եր ըմբռնում ու լուրացնում այն ամենն,  
ինչ վոր ավանդվում եր: Նա դասարանի առաջին աշա-  
կերտն եր: Նա առանձնապես հաջողակ եր նկարչությու-  
նից, բայց այդ ել պատահական բան եր, արդյունք «ան-

վանի» ալցելվի քմահաճույքի։ Դա ալսպես կատարվեց։ Դպրոց ալցելած մի յեպիսկոպոս յերեխաներին մայր յեկեղեցու լուսանկարներից նվիրեց։ Հենրին փորձեց արտանկարել։ Փորձը շատ հաջող անցավ։ Դրանից հետո յեպիսկոպոսի քույրը նրան տետրակ ու գունավոր մատիտներ նվիրեց։ Այնուհետև իր աղատ ժամերն Ստենլին ուրախութիւնը նկարչության եր նվիրում։

Ապաստարանում Ստենլիի ընդունակություններին առանձին ուշադրություն դարձնող չկար։ Միայն դպրոցի տոնին, վոր կրկնվում եր ամեն տարի, նրան ստիպում ելին խումբը կառավարել և արտասանել։ Այդ ժամանակի պաշտոնական դրապոցն աշխատում եր հաճելի լինել «պատվավոր հոգաբարձուներին» միայն յերեխաների դրսից յերեացող գիտելիքներով, այն ել ըստ մեծի մասին՝ կրոնից։ Յերեխաների արթնացած միտքը, վոր բազմաթիվ հիվանդուտ ու կարեոր հարցերի պատասխան եր պահանջում, բավարարություն չեր ստանում։

Նայելով ապաստարանից հեռացող իր հասակակիցներին, Հենրին շատ անգամ եր մտածում, թե կը անքում դրանց ինչ ե սպասում։ Հենրիի ուժեղ ու ինքնուրույն խառնվածքը յերկար չկարողացավ դիմանալ ապաստարանի բռնակալ սիստեմին, վոր յերբեք չեր խնայում մանկական ինքնասիրությունը։ Շատ բնորոշ են Հենրիի ապաստարանից հեռանալու հանգամանքները։ Ալսպես պատահեց։ — աշակերտներից մեկը չանկուտել եր դպրոցի համար գնած շամի սեղանը։

Դաստիարակը կատաղեց։

— Հանցավորն ով ե, — մոնչաց նա։

Յերեխաները չգիտելին։ Դաստիարակը հրամայեց, վոր բոլորը մերկանան։ Ակսվեցին նման դեպքերի ժամանակ սովորական ճիշերն, արտասուքներն, աղաջանքները։ Կրած սարսափները Հենրիի հոգին ան ու դողով լցրին։ Այս ան-

գամ նա կանգնած եր քարացածի պես. և յերբ դաստիարակը նրան դառնալով զալութիւնը լի ձախով ասաց «պառկիր», նա այնքան վրդովվեց, վոր ինքն ել զարմացած իր քաջութիւն վրա, դուռաց. «Վոչ մի դեպքում». բայց խկույն ել հարված զգաց կրծքին ու ընկավ նստարանի վրա. Մի պահ Հենրին գիտակցութիւնը կորցրեց, բայց արագ ուշքի յեկավ և գաղան կտրած դաստիարակի հարվածներից պաշտպանվելով, բոլոր ուժով վոտքով խփեց նրա ակնոցներին. Ակնոցները փշուր-փշուր յեղան, Դաստիարակը յերերաց ու ընկավ, իսկ խելակորույս Հենրին խլեց ճիպոտն ու սկսեց ծեծել հատակին անշարժ ընկած դաստիարակին. Մի քանի ըոպելից հետո Հենրին բոլորովին ուժասպառ յեղավ և ալդ ժամանակ միայն հասկացավ, թե ի՞նչ ե կատարվել: Յերեխանները գլխի ընկնելով, վոր ավելի լավ և դաստիարակին դասարանից դուրս բերել, միջանցքով տարան սենյակ և դուռը ծածկելով, դասարան վերադարձան: Բոլորը հուզված ելին, սակայն յերկուողը չքացավ իսպառ: Պարզ եր, վոր ալես սաներից վոչ վոք անտրտունջ չեր պառկելու ճիպոտների տակ:

— Իսկ յեթե մեռնի, — անհանգստանում եր Հենրին, բայց յերբ ընկերներից իմացավ, վոր նա ուշքի յե յեկել ու սառը ջրով լվացվում ե, սկսեց մտածել, թե ալժմ ի՞նչ պիտի անել:

Ապաստարանում մնալն ալես սարսափելի յեր: Միակ յելքը փախչելն եր:

Ընկերների հետ խորհրդակցելով, Հենրին վճռեց ալդպես ել վարվել:

Յերեսի արյունը լվանալու պատրվակով նա դուրս վագեց բակը: Ընկերը հետեւեց նրան: Բակը շրջապատող պարսպից ցած իջնելով, յերկու յերեխաններն սկսեցին փախչել՝ առանց յետ նայելու:

Ի՞նչ եր սպասում նրանց: Դրա մասին դեռ չելին

մտածել։ Դաշտի թարմ ողը շնչելով, նրանք իրենց զգացին նոր, ազատ ու յերջանիկ կյանքի շեմքում։ Բայց այդ զգացմունքը շուտով տեղի տվավ անհանդիստ ու ընկածված վիճակի։ Ապաստարանի հագուստը նրանց վրա ինչ վոր հանցագործական կնիք եր դնում։ Նրանք աշխատում ելին խուսափել մարդկանցից։ Գնում ելին խուլ կածաններով, իսկ արել մայր մտնելուց հետո մտան կիսավեր աղյուսե շենքի վառարանը։ Անոգնական, տմարդի վերաբերմունքից աշխները վախեցած վորբերը հավասարապես վախենում ելին՝ ցեղեկը—մարդկանցից, զիշերը՝ տեսիլներից։ Միայն առավոտվա դեմ խոր քուն մտան՝ իրար պինդ կպած։

Առավոտը սովու սկսեց տանջել նրանց։ Ստիպված յեղան մարդկանց դիմել, հաշվի չառնելով, վոր կարող են բռնվել։ Ճանապարհ դուրս յեկան և անհամարձակ կերպով հաց խնդրեցին մի կնոջից, վոր իր տնակի մոտ լվացք եր անում։ Բարի կինը նրանց ներս տարավ, փալիքայց ու կշտացրեց։ Տղաները նոր ուժերով շարունակեցին իրենց ճանապարհը։ Մի ամբողջ որ ել ճանապարհ գնալով ու գիշերը խոտի դեպի տակ քնելուց հետո նրանք վերջապես հասան իրենց ուղած տեղը—Դենքիդա, ուր մայր Մողեն եր ապրում։ Այդպես ելին անվանում Հենրիի ընկերոջ մորը։

Շքեղ խանութիւների տեսքը գրավեց հոգնած յերեխաների ուշադրությունը։ Նրանք տղայական միամտությամբ սկսեցին նախանձել այդ խանութիւների գործակատարներին։ Կարծում ելին, թե հենց սրանք են այն բախտավորները, վորոնք վայելում են պատուհաններում ցուցադրած իրերը։

Մայր Մողեն ապրում եր նեղ նըրբանցքի մի մեծ գորշ տան մեջ։ Վորդուն տեսնելուն պես նա ուրախությամբ վրա ընկավ ու սկսեց համբուրել նրան։ Հենրին նայում

եր առաջն՝ առանց իրեն հաշիվ տալու։ Նա ակամա հիշեց իր հանդիպումը մոր հետ։

Յերեխաներին լավ կշտացնելուց հետո մայր Մողեն սկսեց կարեկցորեն հարց ու փորձ անել, թե ինչու և ինչպես թողին ապաստարանը, իսկ յերբ Հենրիի ով լինելն իմացավ, հայտնեց, վոր ինքը ճանաչում ե նրա ազդականներին, վորոնք հեռու չեն ապրում ալդտեղից։

Նրա խորհրդով հաջորդ որը Հենրին յելավ վորոնելու իր ազգականներին։

Վոչ պապը (հոր կողմից), վոչ քեռիները, վորոնք այժմ բավական հարուստ ելին, չուզեցին իրենց վրա առնել անտուն յերեխալի հոգսը։

Միակ հուկս մնում եր հորեղբոր վորդի Մովսես Ուռենը, վոր դպրոցական ուսուցիչ եր։

Ուռենը—մի տիպիկ ուսուցիչ, սկզբում Հենրիին հարցուփորձ արավ՝ իմանալու, թե դպրոցական առարկաներից ինչ գիտե և նրա պատասխաններից գոհ մնալով, հայտնեց, վոր կարող ե վերցնել նրան՝ դպրոցում ծառալություններ կատարելու, խոստանալով փոխարենը կերակրել ու հազցնել։ Բայց հենց սկզբում հագուստ տալուց հրաժարվեց։ Մրա պահանջով Հենրին մի ամսով պիտի գնաբ գյուղը, մորաքը մոտ, վոր այնտեղ գոնե այնքան փող վաստակեր, վոր կարողանար մի ձեռք կանոնավոր հագուստ ունենալ։

Մերի Ուռենը (այսպես եր նրա մորաքը անունը) կարգի բերեց Հենրիի հագուստը, այլ և կերակրում եր նրան։ Սա յել գյուղական ու տնալին զանազան աշխատանքներ եր կատարում։

Հենց առաջին որերից Հենրին ցավով զգաց իր կախում ունենալը մարդկանցից և այն ստորացումը, վոր ինքը հարկադրված եր տանել՝ մի պատառ չոր հացի համար։

Վոչ միայն մորաքուլըն, ալ և հարևանները շարունակ նախատում, կշտամբում ելին նրան։ Զգալուն Հենրին շատ եր տանջվում։ Վերջապես տառապանքի ամիսը լրացավ և մորաքուլըն նրան տարավ Ոուենի դպրոցը։

Յերեխան հույս ուներ, թե դպրոցում նոր կյանք կսկսվի։ Նա մեծ յեռանդով մաքրում եր դասարանները, հետեւում եր, վոր ամեն տեղ կարգ ու կանոն լինի, և կաշվից դուրս եր գալիս հասնելու իր ընկերներին, վորոնք իրենից անհամեմատ շատ գիտելին։ Ոուենը բավական մեծ գրադարան ուներ, բայց արգելում եր ազգականին կարդալ անողիսի գրքեր, վորոնք դասերին չելին վերաբերում։ Հենրին դասարանում բարեկամներ չուներ, վորովհետև աշակերտները նրա վրա շատ բարձրից ելիննալում։ Սա շատ եր վիրավորում նրա ինքնասիրությունը։ Մինչև իսկ ապաստարանում այսպիսի մենակություն ու ստորացումն չեր զգացել։ Այստեղ բոլորն եյին ստորացած։

Ոուենը գնալով ավելի յեր բժախնդիր դառնում։ Հենրիի արտասուքները նրան շատ ելին զայրացնում։ Ինքնասեր Հենրին նրա ծաղրից ու կոպիտ հայնուանքներից շատ եր տանջվում։ Միայն մի բան սովորելու ցանկությունն ու կատարյալ անոգնական վիճակն եր, վոր նրան յետ ելին պահում նոր փախուստից։ Մշտական կշտամբանքն ու ծաղրը թուլլ չելին տալիս, վոր նա դասերի վրա կենտրոնանա։ Նույն իսկ ինքն սկսեց մտածել, թե կերնի ինքն անբանի ու բժամիտի մեկն ե։

Դպրոցում 9 ամիս մնալուց հետո Հենրին նորից գլուղ ուղարկվեց՝ մորաքըրոջ մոտ։

Կյանքն ավելի դառնացավ և թվում եր, թե այս յերբեք չի լավանալու։ Միայն դաշտում վոչխարների յետեից թափառելիս կամ անտառում սիրած քարի վրա նստած ժամանակն եր մոռանում իր իսկական դրությունը։ Նրա մաքերը թոշում ելին դեպի մի ուրախ ու ար-

կածներով լի կյանք, վոր սովոր եր յերեակալել դեռ ապաստարանում լեղած ժամանակ:

Այս անգամ Հենրին ալդ խուզ գլուղում յերկար չապրեց: Մյուս մորաքույրը, վոր ալդտեղ հյուր եր, նրան իր հետ Լիվերպուլ (Անգլիայում) տարավ: Իր կյանքում առաջին անգամ Հենրին հայտնվեց ծովափնյա մեծ քաղաքում: Խողովակների ու կալմերի այդ հսկայական անտառը, վոր շրջապատում եր նրան, նավահանգստի աղմուկնու աղաղակը, փողոցներում մշտապես շարժվող հսկայական ամբոխը—այս ամենն սկզբում շփոթեցրին ու շշմեցրին տղային, բայց նա շուտով ընտելացավ նոր պայմաններին, մանավանդ, վոր սկզբում քեռին ու մորաքույրնել բավական սիրում ու փայփայում ելին նրան:

Հենրին ամբողջ որերով թափառում եր քաղաքում: Սկզբում միայն նայում, դիտում եր, իսկ հետո նաև սկսեց գործ փնտուել:

Աշխատանք գտնելն անհրաժեշտ եր: Նա ալդ զգում եր վոչ միայն՝ վորովհետեւ քեռին ու մորաքույրը նյութապես նեղված ելին, այլ և այն պատճառով, վոր վճռել եր ինչ ել լինի, անկախ մարդ դառնալ: Քեռին շատ աշխատեց նրա համար գործ գտնել, բայց ապարդյուն: Հենրին ինքն սկսեց խանութները մտնել և առաջարկել իր ծառալությունը՝ խանութի աշակերտի պաշտոնի համար:

Մի անգամ ել բախտը բանեց և սովորական մերժման փոխարեն մի մանրավաճառ վարձեց նրան—շաբաթական հինգ շիլլինգ<sup>1</sup> վարձատրությամբ:

Հենրին այստեղ հիվանդացավ ու տեղը կորցրեց:

Նորից վորոնումներ, նորից մերթ հույս, մերթ մերժում: Ուր գիմել—չգիտեր, վորովհետեւ վոչ պետությունը, վոչ հասարակությունն այդպիսիների մասին բնավչելին հոգում:

<sup>1</sup> Շիլլինգը=մոտ 50 կոպեկի:

Յերկար անհաջողություններից հետո Հենրին ծառա-  
լելու մտավ մի մսավաճառի խանութ, վոր մոտ եր դոկե-  
րին։ Ինքնուրույն մարդ լինելու հույսն այս ծառալու-  
թյունն ել չարդարացրեց, —կիսաքաղց կլանք, 14 ժամյա  
մաշող աշխատանք, գործակատարների կողմից կոպտու-  
թյուն ու հայնոյանք —ահա այդ ծառալությունից ստա-  
ցածը։

Շուտով Հենրիի կլանքում մի կարևոր փոփոխություն  
տեղի ունեցավ։

Մի անգամնա մթերքներ տարավ առևտրական «Վին-  
դերմեր» նավը, վոր ուղևորվում եր Նոր-Ռըլեան<sup>2</sup>։

Նավալետը նկատելով այն մեծ հետաքրքրությունն  
ու զարմանքը, վորով Հենրին դիտում եր նավասենյակն  
ու նրա մեջ լեղած իրերը, առաջարկեց ծառալության  
մտնել նավը —նավասենյակի սպասավորի պաշտօնով։ Դրա  
համար խոստացավ ամսական 5 դոլլար<sup>3</sup> և հագուստ տալ։  
Հենրին իսկույն համաձայնեց։

Քեոի թոմ սկզբում լսել չեր ուզում Ամերիկա գնա-  
լու մասին, բայց լերը Հենրին լուրջ ու գործնական կեր-  
պով հայտարարեց, վոր ուզում ե գնալ, վորովհետեւ մի-  
հնույն ե, Լիվերպուլում գործ չի գտնելու, ստիպված լե-  
ղավ զիջել։ Յերեք որից հետո «Վինդերմերը» Հենրիին  
տարավ դեպի Նոր-Ռըլեան։

Յետևում մնացին դոկերի ցանկապատերը, վորտեղ  
նա հաճախ եր տեսնում դեպի իրեն համար անհայտ քա-  
ղաքներ գնացող նավեր, իսկ առաջն են անսահման ով-  
կիանոսն ու նոր կյանք։

<sup>1</sup> Դոկ —նավահանգստում այն տեղն ե, ուր նավեր են նորու-  
պում։

<sup>2</sup> Նոր-Ռըլեան —գլխ. քաղաք Ամերիկայի Միացյալ Նահանգ-  
ների շտատներից մեկի։

<sup>3</sup> Դոլլարը = ե 2 ռուբլու։

Նոր կյանք. — «Հայրք» . — Գրքեր. — Մոլորություն. — Ստենլին պայմանական է ստրկության դեմ. — Առաջին նաևապարհորդություն յել արկածներ. — Ստենլին լրագրող.

Ճանապարհորդության առաջին յերեք որը Հենրիի դուստրը շարունակ պտույտ եր դալիս։ Նա ծովալին հիգանդություն ստացավ, վորից անչափ թուլացավ։ Տղան հաղիվ եր շարժվում։

Հիվանդությունից մի փոքր թեթևացած, հիմա յել ծեծ ու հայնուանք սկսվեց, վոր լոցմանը թափում եր Հենրիի ու նրա ընկեր Հարրիի գլխին։

Հենրիին ստիպում ելին նավասենյակի փոխարեն տախտակամածը մաքրել, այնտեղ աշխատել։ Այս խաբելությունը, լոցմանի կոպտություններն ու Հարրիի պատմությունները ծովալին ծառայության դժվարությունների մասին Հենրիի մեջ զզվանք առաջ բերին։ Նա ստրկական կախյալ վիճակից ազատվելու մասին եր յերազում, սակայն լոցմանի ձեռքն ընկավ, վոր ավելի դաժան եր, քան այն բոլորը, վորոնցից այնքան յեռանդով փախչում եր։ Միայն Նոր-Որլեանին մոտենալիս լոցմանը մեղմացրեց իր վերաբերմունքն սպասավորների նկատմամբ։ Նավաստիներից մեկի ասելով, լոցմանը դատից եր վախենում։ Նոր-Որլեան հասնելուն պես Հարրին սկսեց Հենրիին ծանոթացնել քաղաքի հետ։ Նա այդ բանը կատարում եր մի առանձին հաղարտությամբ։

Այերիկական այս առաջին քաղաքը, վոր տեսնում եր Հենրին, ահազին տպավորություն թողեց նրա վրա։ Փողոցներում շարունակ նեղքերի յեր հանդիպում, վորոնք, հենց այն ե, ապրանք ելին բարձում ու դատարկում։ Տեսնում եր նաև գործով զբաղված ամերիկացիների, և նրան թվաց, այստեղ մարդիկ այն չեն, ինչ վոր Անգլիայում։

Հետադայում նոր-Որլեանը դարձավ Ստենլիի ամենասիրած քաղաքը։ Այստեղ նա առաջին անգամ զգաց, վոր ինքն ազատ ու անկախ մարդ է. առաջին անգամ և այն՝ առմիշտ հրաժարվեց մի կտոր հացի համար իր ինքնասիրությունը զոհաբերելուց։ Հենց այստեղ նա այնպիսի աշխատանք տեսավ, վոր վոչ թե բթացնում, այլ գիտակցել եր տալիս, թե իր որը զուր չի անցել։ Հենրին վճռեց փախչել նավից և դառնալ այս քաղաքի մարդկանցից մեկը։

Գիշերն այնքան սպասեց, վոր Հարրին խումփիալ սկսեց զգուշ կերպով նավից դուրս լեկավ և ափ համնելուն պես սկսեց վազել։ Կանգ առավ միայն այն ժամանակ, լերը «Վինդերմերը» բավական հեռու լեր մնացել։ Մինչեւ լույս մնաց նավահանգստում թափած բամբակի ընոների արանքում, իսկ վաղ առավոտյան գնաց քաղաք՝ աշխատանք գտնելու։

Եերկար թափառեց անծանոթ փողոցներում, մինչև վոր վերջապես մաքսատան պահեստի դուանը մի ծեր մարդու պատահեց՝ աթոռի վրա նստած, լրագիր կարդալիս։ Հենրիին այնպես թվաց, թե այս մարդը շատ բարի պիտի լինի, ուստի բոլոր ուժերը հավաքեց, մոտեցավ ու իր ծառայությունն առաջարկեց նրան։ Անծանոթն սկզբում ուշադրությամբ դիտեց նրան, իսկ հետո հարցրեց նրա ովկ և վճրտեղացի լինելը։ Հենրին պատմեց նավի վրա կրած իր ծանր արկածների մասին և գործ խնդրեց։ Այս հարց ու փորձից հետո Հենրին այս անծանոթի հետ գնաց նախաճաշելու, մաքրվելու, մազերը կարգի ըերելու։ Դրանից հետո միայն պիտի ներկայանար իր նոր տիրոջը—միստեր Սպիկին։ Տարիքավոր մարդը, վոր հենց առաջին վայրկանից կենդանի մասնակցություն ընդունեց Հենրիի վիճակում, միստեր Ստենլին եր—Սպիկի գործերի առևտրական պայմանագրեր կապող միջնորդը։

Հետադայում սա վորդեղբեց Հենրիին։

Հենրիի նոր պաշտոնը՝ կալանում եր նրանում, վոր երկու նեղերի պիտի ոգներ՝ վագոնետկաներից ապրանք դուրս թափելու և բարձելու, տակառներ գլորելու և լիքն արկղներին հասցեներ փակցնելու:

Հենրին այսպիսի վոգեորությամբ ու բարձր տրամադրությամբ եր աշխատում, վոր նույնիսկ չնկատեց, թե յերեկոն ինչպես վրա հասավ ու գործն ել վերջացավ:

Նեղերից մեկն ոգնեց նրան՝ սենյակ գտնելու: Ընդհանրապես Հերիի գործի ընկերները—նեղը, թե ամերիկացի, ամեն կերպ աշխատում ելին ոգնել, վոր նա բարեհաջող կերպով կարգավորի իր նոր կլանքը: Այսպիսի հողետար և ուշադիր վերաբերմունք Հենրին իր կլանքում առաջին անգամ եր տեսնում:

Նոր ոռնիկն—ամսական 25 դոլար, վեր եր ամեն սպասածից:

Բոլոր ծախսերը հոգալուց հետո Հենրիի մատ ամսական դեռ մի զգալի գումար ել մնում եր: Մնացած ժամանակն ու դրամը նա ընթերցանության գրքերի վրա յեր գնում: Ահա թե ինչ ե պատմում Ստինլին նոր-Ուրիեանի մասին, վոր, իր ասելով, սովորեցրեց նրան «մարդ իինել»: «Յերկու-յերեք պատմվածք կարդալուց հետո յես ընթերցանության մեծ պահանջ զգացի: Այդ պահանջը բավարարում ելի զրքեր գնելով: Կարգում ելի անհաղու շատ: Տանիքում գտնվող իմ փոքրիկ սենյակն ինձ համար ամեն տեսակ հերոսների մի աշխարհ դարձավ: Յերկակալությունս աշխատում եր վառ կերպով և աշքերիս առաջից անցնում ելին ալդ հերոսների գրավիչ գեմքերն ու նրանց արարքները: Յես հետաքրքրվում ելի աշխարհագրությամբ ու պատմությամբ: Այդ ուղղությամբ մեծ պաշար ձեռք բերի ընթերցանության միջոցով: Յերեակալությամբ թոշում ելի զանազան յերկրներ, հերոսներիս հետ միասին վերաբրում Արքայանց արկածները, մաս-

նակցում ելի նրանց կոփվներին, հաղթահարում ելի վտանգ-ներին ու հերոսություններ ելի գործում:

Զանազան զվարճությունների փոխարեն դրքերով ելի տարվել: Փոխանակ ընկերներիս հետ վորեկ զվարճավայր գնալու, գործից հետո սենյակս ելի շտապում ու թաղվում սիրածս գրքերի մեջ»:

Միստեր Ստենլին ու իր կինը շատ շուտ կապվեցին խելացի ու լեռանդոտ Հենրիի հետ: Նա բոլոր տոներին անց եր կացնում Ստենլիի ընտանիքում, ուր հաճախ լըսում եր քաղաքականության, գրականության ու հասորակական կյանքի մասին: Բայց հաճախ նա իր լած ները լավ չեր ըմբռնում: Կարդացած գրքերը նրան-նարավորություն ելին տալիս միայն առանձին բառեր ու նախադասություններ հասկանալ, այնինչ՝ իմաստը միանդամայն անհասկանալի յեր մնում: Հենրին զգում եր, վոր իր զարգացումը պիտի լրացնի: Այստեղ ել նրան ողնության լեկավ միստեր Ստենլին, վոր գրքեր եր գնում, նվիրում Հենրիին ու ցուցումներ տալիս, թե ինչ կարդա:

Հենրիի տերը—միստեր Սպիկը դեղին տենդից հանկարծաման շեղափ: Հենրին ստիպված լեղավ ծառայությունը թողնել: Դա ալսպես պատահեց.—մի անդամ միստեր Ստենլին գործով բացակայեց Նոր-Որլեանից: Հենց այդ ժամանակ ել հիվանդացավ նրա կինը: Հենրին իր պարտքը համարեց անտեր չթողնել անոգնական հիվանդին և արձակուրդ խնդրեց: Նոր տերը, վոր Սպիկի մահից հետո ընդունել եր նրա գործերը, արձակուրդ տալը մերժեց՝ ավելացնելով, վոր յեթե ցանկանում ե, կարող ե պաշտոնը թողնել: Հենրին անմիջապես խնդրեց ազատել իրեն: Նա այլ ևս նախկին անոգնական տղան չեր, վոր ամեն վիրավորանք լուռ ու մունջ տաներ: Մաքկային արժանապատվության զգացմունքը կարիքի վախից ավելի ուժեղ եր:

Մի քանի որից հետո միստեր Ստենլիի կինը մեռավ. ակսվեց անհաջողությունների նոր շրջան: Հենրին նորից հարկադրվեց աշխատանք վորոնել: Նա ոգվար եր ապրում, չնայելով, վոր վոչ մի աշխատանքից չեր փախչում. փակտ եր սղոցում ու կրում, որավարձով աշխատում եր, հիվանդներ եր խնամում:

Հենրին անհամբեր սպասում եր միստեր Ստենլիի վերագրածին. սակայն որերն անցնում ելին իրար յետելից, իսկ նա չկար ու չկար:

Հենրին վորոշեց նրան վորոնելու լենել: Ժողովելով իր վերջին ունեցածը, նա գնաց այն քաղաքը, ուր իր կարծիքով Ստենլին պիտի լիներ: Բայց ալդտեղ նրա համար պարզվեց, վոր Ստենլին արդեն նոր-Ռոլեան ե վերադարձել: Մի ամբողջ ամիս ֆիզիկական համառ աշխատանք տանելուց հետո Հենրին հազիվ նոր-Ռոլեան ընկափ: Ճանապարհին անփող մնալով, նա վարձվեց վորպես Ջրով գերաններ քշող և լաստերով հասավ նոր-Ռոլեան: Ճանապարհին նա բանվորների համար կերակուր եր պատրաստում, նրանց հետ միասին լաստ եր քշում:

Վերջապես նոր-Ռոլեանում գտավ միստեր Ստենլիին: Անսպասելի յերկար անջատումից հետո հանդիպումը յերկուսին ել համոզեց, վոր նրանք իրար հետ շատ են կապված:

Միստեր Ստենլին պատանուն աշքից կորցնելուց հետո նրան ամեն տեղ վնառել եր: Այս անդամ վորոշեց այլևս չբաժանվել նրանից:

Յերբ վոր Ստենլին Հենրիին հայտնեց, թե ուզում ե նրան վորդեգրել ու իր անունը տալ, տղան ուրախությունից զփոթվեց: Նա զգաց, վոր ինքն այլևս մենակ չե, վոր իր հարգած մարդն այժմ իր հալրն ե դառնալու, վոր վերջապես գանվեց մեկը, վոր վոչ միայն հոգալու յե իր մասին, այլև ամենքի առաջ նրան իր դավակին ե անվանելու:

Մինչև ալժմ Հենրին իրեն անարգվածի մեկն եր համարում և փնտռում եր իր մեջ այն մեղքը, վորի պատճառով հասարակությունից ինքն այնքան արհամարհված եր: Միամիտ պատանին չեր հասկանում, վոր կապիտալիստական կեղծավոր հասարակության սովորութներն ելին, վոր ստիպում ելին նրա մորն ամաչել ու քաշվել իր ապորինի ծնունդ զավակի պատճառով: Պետությունն ու հասարակությունը շրջապատողների մեջ միայն արհամարհանք ու ատելություն ելին սնուցանում դեպի Հենրիի նմանները:

Վաղ մանկությունից մինչև 15 տարեկան հասակը նա զգում եր, վոր մարդկանց վերաբերմունքը դեպի ինքն այնպես ե, վոր կարծես ինքը մյուս յերեխաներից պակաս իրավունք ունի ապրելու. «Ես վոչ վոքի վատություն չեմ արել, ասում ե Ստենլին, մինչդեռ ամենքն ինձ արհամարհում են»:

Հենրին իր ուսերի վրա տանում եր տերտերական կեղծ առաքինություն ամբողջ ծանրությունն, ուստի հասկանալի յե այն ուրախությունը, յերբ միստեր Ստենլին նրան վորդեգրեց:

Այսպես, ուրեմն, Հենրին հայր գտավ: Յերկու տարի նրանք միասին ճանապարհորդեցին հարավային Ամերիկայում, և այս ճանապարհորդությունը Հենրիի համար ամենալավ դպրոցը դարձավ, վոր վոչ միայն գիտելիքներ տվավ այդ յերկրի ու նրա բնակիչների մասին, այլ և նրանում հետաքրքրություն դարթեցրեց դեպի ուրիշ յերկրներ:

Հայր ու վորդի ազատ ժամանակ ընթերցանությամբ ելին զբաղվում: Գրքերը բացառապես գիտական ելին, վորովինետև ձեռք ելին բերվում հատկապես Հենրիի զարգացման թերին լրացնելու նպատակով: Մի քանի ժամանակից հետո հայր Ստենլին թույլ տվավ, վոր Հեն-

րին հյուր մնա **Արկանդասի<sup>1</sup>** մի ծանոթ զանառականի մոտ՝ այն նպատակով, վոր Հենրին նրանից ինքնուրույն կերպով առևտուր անել սովորի:

Բայց Հենրին առևտրական դառնալ չեր վիճակված:

Նրա Արկանդասում լեղած ժամանակ մեռավ հայր Ստենլին և տղան դարձյալ մնաց միայնակ:

Այդ ժամանակ պատերազմ բռնկվեց Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային և հարավային նահանգների մեջ: Հենրին, վոր մինչ այդ համարյա անծանոթ եր քաղաքական կյանքին, այժմ ագահորեն սկսեց լրագրեր կարդալ, վոր հասկանա այն հուզմունքի պատճառը, վոր պաշարել եր փողոցներում աղմկող ամբոխին և վորի աղղեցության տակ լերիտասարդությունը բանակ եր մտնում:

Մի անգամ Հենրին մի փաթեթ ստացավ՝ մեջը կանացի հազուստ: Դրանով նրա վախկոառությունն ելին տկնարկում: Այս գեղքը վճռեց նրա հերթական անելիքը: Առանց հասկանալու, թե ով ե մեղավոր, ով արդար, ինքնասիրությունից նա մտավ հարավային բանակը:

Նոր նշանագգեստները, փայլուն կոճակները, «ուռա» աղաղակները—այս բոլորն այնքան ելին տոնական, վոր կարծես լերիտասարդությունը հանդիսավոր զորահանդեսի լեր պատրաստվում: Հենրին, վորի համար տեղի ունեցող գեղքերի նպատակն ու իմաստը պարզ չեր, փորձեց հարցնել իր զինվորական ընկերներին: Ընկերները, վորոնց մեծ մասը պլանտատորների<sup>2</sup> զավակներ ելին, այնպես նկարագրեցին, վոր իրը թե հյուսիսային նահանգները հարավայիններին ավերել ու վոչնչացնել են ուղում, ուստի բոլորը մի մարդու պես պիտի լելնեն՝ պաշտպանելու իրենց գոլությունը:

Մոտավորապես նույնն ելին ասում նաև լրագրերը:

<sup>1</sup> Հյուսիսային Ամերիկայում:

<sup>2</sup> Պանտառուր—ստրկատեր՝ Ամերիկայում:

Յեկ միայն կորիմսերից հետո, լեռը չքացավ պատերազմական վիճակի ամբողջ փալլը, Հենրին հասկացավ, թե ինչ ե պատերազմը:

Ամենից առաջ աչքի լեր ընկնում զինվորների արտաքին տեսքը. Նրանք կեղտոտ ելին, զրկանքներից հյուծված ու հոգնած. չար ելին, անտարբեր դեպի ամենինչ, նրանց համար միայն այսորը դուլություն ուներ, և սա սպանում եր նրանցում ամեն ինչ վոր մարդկանին եր:

Հենրին պարզ տեսավ զզվելի պատկերը պատերազմի, վոր վոչնչացնում ու խեղում եր մարդկանց, անապատի լեր վերածում գյուղերը: Սովոր, միջատներ, հիվանդություններ—ահա պատերազմի անխուսափելի հետևանքները:

Իր ալդ ժամանակի տպավորությունների մասին առա թե ինչ ե գրում Ստենլին. «Յերբ ուշքի լեկա (ճակատամարտի ժամանակ նա ընկել եր անզգա), զորամասսարդեն բավական հեռացել եր: Ուժերս հավաքեցի ու գնացի նրան փնտռելու: Հենց այդտեղ ել տեսա այն, ինչ վոր անուշադիր ելի թողել՝ տարված կռվով: Յես տեսա պատերազմի առաջացրած ավերները, դիակների կուլտեր և արյան լճակներ:

Ամբողջ կանքումս յես չմոռացա այն տպավորությունը, վոր թողին ինձ վրա սպանվածների լայն բացված աչքերը: Յեկ վորքան ավելի ելի առաջանում դիակներով ծածկված այս դաշտով, այնքան զայրություն ու տեղությունս ավելի լեր բորբոքվում դեպի պատերազմը: Վոր մարդուն վայրենի, կատաղի ու արյունուշտ դագան և դարձնում:

Ստենլին գերի ընկավ: Գերիների բարակում, ուր նաև Ստենլին եր, նրա ասելով «մոտ յերկու հարյուր մարդ կար, և յեթե մեկը մտներ այնտեղ, կտեսներ՝ մարդկային պատկերը համարյա կորցրած կեղտոտ, դզգզված ու պատռոտած հագուստներով մարդիկ: Սրանցից վո-

մանք նստած ելին ծալապատիկ, գլխակոր ու անշարժ, վոնանք իրենց վրա վխտացող բազմաթիվ միջատների դեմ ելին պայքարում, շատերն ել ընկած ելին բոլորովին ուժասպառ։ Մահը շատերի համար փրկություն երև և նա իրեն լերկար չեր սպասեցնում։ Ամեն առավոտ սալակները դալիս ու դիակներ ելին կրում։ Գերության մեջ Ստենլիի համար պարզվեց, վոր հյուսիսային նահանգները բնավ չելին ուղում կողոպաել հարվալիններին ու խլել նրանց ստրուկները, այլ կովում ելին ստրկության —կուլտուրական ժողովուրդների համար այդ միտնդամայն խարսառակ լերեռութիւ—վոչնչացման համար<sup>1</sup>։

Հետապայում Ստենլին իր «Յես ինչպես գտա Լիվինգտոնին» գրքում գրում եր. «Յես... Միացյալ Նահանգներում ու մարդկանց ելի հանդիպում, վորոնց բարեկամությամբ միայն պարծենալ կարող ելի։ Այսպիսով արդեն նախապատրաստված ելի յուրաքանչյուր սեամորթի իմ բարեկամների շարքն ընդունելու, նույնիսկ ինձ յեղայր անվանելու և նույնքան հարգելու, վորքան կը հարգելի, յեթե նա ինձ հետ միասին նույն գույնի և նույն ցեղից լիներ։ Վոչ նրա գույնը, վոչ դեմքի առանձնահատկությունները չեն կարող խանդարել, վոր նա ևս նույն իրավունքներն ունենա, ինչ վոր յես ունիմ»։

Ահա թե ինչու հենց վոր Ստենլին հասկացավ հարավին պլանտատորների զայրութիւ պատճառը, իսկ արդ պատճառն ստրուկներից զրկվելու վախն եր, իսկուն անցավ հյուսիսայինների շարքը՝ նրանց հետ միասին կռվելու ստրկությունը վոչնչացնելու համար։

Մի քանի ժամանակից հետո Ստենլին ծանր տենդով բռնվեց ու հարկադրված յեղավ զինվորական ծառալությունը թողնել։

<sup>1</sup> Պատերազմ ստրուկների ազատության համար Ամերիկայում, 1861—1865 թիվը։

Նա նորից դարձավ մերթ որավարձով աշխատող, մերթ  
գլուղական բանվոր, մերթ նավի ծառալող:

Հոգնած ու միայնակ, նա ուզեց հայրենիքն ու մորը  
տեսնել: Այս նպատակովնա ուղևորվեց դեպի Դենքիդ:

Մայրն ու ազգականներն առաջվա պես սառն ըն-  
դունեցին նրան: «Նորից զգացնել տվին, թե հարևանների  
աչքում նա ընտանիքի խալտառակություն ե և լավն այն  
ե, վոր շուտով թողնի, հեռանա»:

Ստենլին վերադարձավ Ամերիկա: Այստեղ նավաստի  
դարձավ առևտրական մինավի, վոր առևտուր ուներ թեվրո-  
պալի և գաղութների մեջ: Այս անգամ նա յեղավ Իս-  
պանիայում, Իտալիայում և Արևելյան Հնդկաստանում:  
Նրա դիտելու ընդունակությունը և բավական կարդացած  
լինելը նրան հնարավորություն տվին՝ իր ուժերը փորձել  
թղթակցություններ գրելում: Նա սկսեց նկարագրել զա-  
նազան յերկրներում իր տեսած անցքերը: Հոդվածներն  
ուղարկում եր անգլիական ու ամերիկական թերթերին, վո-  
րոնք հաճույքով ելին հյուրընկալում նրանց: Այդ հոդված-  
ներն իրենց աշխուց ու հետաքրքիր բովանդակության  
շնորհիվ մեծ հաջողություն ունելին:

Ստենլիի անունը շուտով այնքան հայտնի դարձավ,  
վոր հրավիրվեց իրեն ամերիկական նավատորմի գինվո-  
րական թղթակից: Այս առաջարկությունն ընդունելով,  
նա շարունակեց աշխատակցել թերթերին:

Այս աշխատանքը մեծ բավականության եր պատճա-  
ռում իրեն Ստենլիին. - շրջել՝ զանազան յերկրներ, դիտել  
այլ տեղերի բոլոր նոր ու հետաքրքիր անց ու դարձը —  
նրա սրտովն եր: Այս բոլորի մասին եր նա յերազել դեռ  
Նոր-Արևեանում յեղած ժամանակ և անհայտ յերկրների  
նկարագրերը կարդալիս:

Բացի դրանից՝ այդ աշխատանքն այնքան լավ եր  
վարձատրվում, վոր կարող եր և գրքեր ձեռք բերել, և

աղատ ժամանակ ունեցած դեպքում վորևե գրավիչ ճանապարհորդություն կատարել:

Մի անգամ Ստենլին ճանապարհորդեց Միսսուրի<sup>1</sup> գետով՝ իր նման քաջասիրտ մեկի հետ։ Այս ճանապարհորդության համար նա մի հարթահատակ նավակ շինեց, վոր «հոգեսպան» եր կոչվում։

Շատ խիզախ պետք եր լինել՝ այս գետով լողալու համար. — տեղ-տեղ խիստ սըընթաց, տղմոտ հատակից ալստեղ-այնտեղ գուրս ցցված ծառաբներ — այս բոլորն ահազին դժվարություններ ու վտանգներ ելին ստեղծում։ Բացի դրանից՝ ափերում ապրող հնդիկները անբարյացակամ վերաբերմունք ունելին դեպի սպիտակները, և մեր ճանապարհորդների կյանքը վտանգից ազատ չեր։

Այս համարձակ ու հաջող փորձը սիրտ տվավ Ստենլիին և իր ընկերոջը՝ մտածելու մի մեծ ու ինքնուրույն ճանապարհորդության մասին։ Դրա համար ընտրեցին Փոքր Ասիան։ Ընկնելով Բոստոն<sup>2</sup>, մեր ճանապարհորդները մի փոքրիկ առազաստանավով ուղերձվեցին դեպի Զմյուռնիա<sup>3</sup>, վոր այստեղից ել անցնեն կ. Պոլիս։

Զմյուռնիայի մոտ տաճիկները նրանց կողոպտեցին ու բանտարկեցին։ Միայն նրանց վիճակով շահագրգուված մի մարդու միջնորդությամբ կարողացան ազատվել։

Ստենլին իր այս արկածներն այնքան վառ ու կենդանի գույներով նկարագրեց թերթերում, վոր ամիրիկական «Նյու-Յորք Հերոլդ» մեծ թերթի հրատարակիչը նրան մշտական թղթակցի տեղ առաջարկեց։

Ստենլին այդ առաջարկը սիրով ընդունեց, վորով-

<sup>1</sup> Միսսուրի — Հյուս։ Ամերիկայի Միսսիսիպի մեծ գետի մի վտակ։

<sup>2</sup> Բոստոն — Հյուս։ Ամերիկայի նահանգներից մեկի գլխավորքաղաքը։

<sup>3</sup> Զմյուռնիա — Տաճկաստանի քաղաքներց մեկը։

հետև «Նյուր-Յորք Հերուլն» ալդ ժամանակ ամենատարածված թերթն եր Ամերիկայում:

Այսպիսով Ստենլին վերջնականապես դարձավ լրագրող: Թերթի հրատարակիչ Հորդոն Բեննետը շատ երգնահատում Ստենլիի բացառիկ ընդունակությունները և ամենապատասխանատու հանձնարարություններ եր անում՝ զանազան լերկրներում:

Նա անգլիական մի եքսպերիցիալի հետ Ստենլիին ուղարկեց Հարեցստան, ավելի ուշ՝ Սուեդի ջրանցքի հանդիսավոր բացմանը, Աթենք, Կրետե կղզին, վերջապես իսպանիա:

Լրագրական աշխատանքին զուգընթաց Ստենլին անխոնչ կերպով իր զարգացումն եր ամբողջացնում: Խողանիայում նա զբաղվեց խսպաներենի ուսումնասիրությամբ և կարծ ժամանակից հետո արդեն կարողանում եր թղթակցել խսպանական թերթերին: Ընդհանրապես նա վոչ մի առիթ չեր թողնում՝ իր պաշարն ընդարձակելու: Մրան մասամբ ել նրա կյանքի պայմաններն ելին նպաստում: զանազան լերկրներում կատարած ճանապարհորդությունների ժամանակ նա շփում եր բազմաթիվ մարդկանց, նոր դրությունների հետ:

Բայց, ինարկե, վորպեսզի կարելի լիներ տպագորությունների ալդ հարուստ պաշարն ախալես ողագործել, ինչպես Ստենլին եր անում, ոլետը եր նրա զործունակ յեռանդոտ խառնվածքն ունենալ:

Այսպիսով Ստենլին հետզհետե «ամենից մերժվածից» հայտնի լրագրող ու զարգացած մարդ դարձավ: անհատական անկախություն ձեռք բերելու ճգտումից նա լայն հասարակական աշխատանքի անցավ: Նրա ուժեղ անհատականությունը սրանով չբավարարվեց. նրա զործունելությունը վոչ միայն Ամերիկայի սահմաններից գուրս և ծավալվեց, այլ և շուտով ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրության առարկա դարձավ:

Անզլիացի նանապարհորդ Լիվինգստոնը. — Ստենլին Լիվինգստոնը վորոնում և Աֆրիկայում. — Ստենլիի յերկրորդ նանապարհորդությունը դեպի Աֆրիկա. — Կոնգո գետի հայտնաբերումը. — Ստենլիի յերրորդ նանապարհորդությունը. — Կոնգո պետության հիմնումը. — Ստենլիի չորրորդ նանապարհորդությունը. — Ստենլին վորոնում և Խմբն. փառային. — Ցեղակացություն:

Տասներորդ դարի յերկրորդ կեսը կապված ե տեխնիկայի և գիտության հսկայական զարգացման հետ. Գոլորշին ու ելեկտրականությունը մարդուն հնարավորություն տվին բնության այնպիսի բնագավառներում նվաճումներ կատարել, վորոնք մինչ այդ անմատչելի ելին համարվում: Համարձակ մտքերն շտապեցին տեխնիկայի հաջողություններն ոգտագործել՝ գիտության բոլոր ասպարեզներում նոր զյուտեր ու հետազոտություններ անելու:

Բեեռային սառուցյներն ու տրոպիկական յերկրները հավասարապես գրավիչ ելին ճանապարհորդների համար: Նրանց դադարնիքները թափանցելու համար այդ մարդիկ հաճախ իրենց կլանքն են զոհել: Մեկի մահը մլուսին յետ չեր պահում և այսպես՝ մարդկությունը քայլ առ քայլ նոր յերկրներ նվաճեց:

Կապիտալիստական յերկրների կառավարությունները եքսպեդիցիաներին աջակցում ելին դրամով, վորովհետեւ իրենց ապրանքները սաղացնելու համար նոր յերկրների կարիք ունելին: Բացի դրանից՝ նոր հայտնաբերած յերկրները նրանք իրենց գաղութներ ելին դարձնում, այսինքն տեղացիներին իրենց համար աշխատեցնում ելին: Կուլտուրայի և տեխնիկայի բացակայությունը տեղացիներին թույլ չեր տալիս պայքարել իրենց ինքնուրունության համար և նրանք ստրուկներ ելին դառնում:

Մինչև XIX դարի վերջը դեռ գոյություն ուներ ստրուկների վաճառքը: Նրանց վաճառում ելին վորպես բան-

վորական ուժ։ Յեվրոպացիք գաղութներն ելին ուղարկում նեգր-ստրկավաճառների, վորոնք տեղացիներին գերում ու վաճառում ելին։

Այս խայտառակ առևտուրն Աֆրիկայում առանձնապես ավելի յերկար պահպանվեց։ Յերբ նեգր-ստրկավաճառներն ընկնում ելին գյուղերի վրա, այլում ու ընակիչներին գերում ելին, հարևան գյուղացիք փախչում ելին յերկրի ներսերը, ուր դեռ սպիտակներ չկալին։

Հասկանալի լի, վոր գերությունից ճողովրող տեղացիք պիտի առելին յեվրոպացիներին։ Դրանք դաժան վրեժ ելին առնում իրենց ձեռքն ընկած յեվրոպացիներից ու սպիտակներից։

Տեղացիների այս թշնամական տրամադրության վրա ավելանում եր նաև աֆրիկական ճանապարհների դժվարությունը, ուր առանց ալդ ել՝ շոգը, չոր սիվազները և ջրի բացակայությունը դժվարացնում ելին ալդ յերկրի ուսումնասիրությունը։

Ուսումնասիրված ելին միայն Աֆրիկայի յեղերը Նրա կուսական տարածությունները գեռ սպասում ելին իրենց հետազոտողին։ Ալդ առաջին հետազոտողներից մեկը յեղագի անդիմացի հոչակավոր ճանապարհորդ Դավիթ Լիվինգտոնը։

Լիվինգտոնն առաջին անգամ Աֆրիկա գնաց անդիմական միսիոներների<sup>1</sup> հետ։ Յերբ անապատով անցնելիս յեպիսկոպոսն ու միսիայի մյուս անդամները մեռան, անդիմական կառավարությունը չուզեց գրամ տրամադրել Լիվինգտոնին։ Մնալով առանց փողի, նա վերադարձավ Անգլիա, վորտեղ սկսեց գերեվաճառության դեմ քարոզել, նա մասնավոր մարդկանց շրջանում փող ժողովելով, նորից գնաց Աֆրիկա, վորպեսզի նեղոս գետի ակունքները հետազոտի։

<sup>1</sup> Միսիոներներ հոգևորականության ներկայացուցիչներն ելին, վորոնք նոր հայտնարերված յերկրներում քրիստոնեություն ելին տարածում։

Սկզբում Լիվինգստոնը նամակներ եր ուղարկում Անգլիա-  
ն նկարագրում եր իր գլուտերն ու հետազոտութիւնները:  
Բայց շուտով նամակներն ընդհատվեցին և շատերը նրան  
կորած համարեցին:

Լիվինգստոնին փնտռեց, գտավ ու փրկեց Ստենլին,  
վորին հետագալում վիճակվեց դառնալ Աֆրիկայի ամենա-  
հոչակավոր ճանապարհորդներից մեկը:

Դուք տեսաք, թե ինչպես զարգացավ Ստենլիի գի-  
տության ու գործունելության ծարավը, կոփվեց բնավո-  
րությունը—նախ՝ անձնական անհաջողություններում,  
իսկ հետո՝ ճանապարհորդություններում, վոր նա այնքան  
սիրում եր:

Ստենլիի ճանապարհորդությունները, վորոնց մասին  
վերը խոսվեց, կամ նրա պաշտոնական պարտականու-  
թյունների հետ ելին կապված, կամ հետաքրքիր ելին  
միայն նրա համար և նրա հարցասիրությանն ելին բա-  
վարարում:

Ստենլիի ժամանակակիցներն ալդ ճանապարհորդու-  
թյունները չելին մոռանում, վորովհետև այնպես ելին  
նկարագրված, վոր կարդացվում ելին մեծ հետաքրքրու-  
թյամբ:

Ստենլիի մինչ ալդ այցելած լերկըներն ամենքին ելին  
հայտնի ու լեվրոպացի բնակիչներ ունելին:

Պարզ ե, վոր դեպի Աֆրիկա կատարած առաջին ճանա-  
պարհորդությունը Ստենլիի այն փառավոր գործունելու-  
թյան սկիզբն եր, վորի շնորհիվ նա ամբողջ աշխարհին  
հայտնի դարձավ:

Դա տեղի ունեցավ 1869 թվին:

Այդ ժամանակ Ստենլին գտնվում եր Մադրիդում,  
իսպանիայի մայրաքաղաքում: Հորդոն Բեննետի անսպասե-  
լի հեռագիրը նրան Փարիզ կանչեց: Ստենլին շտապ պատ-  
րաստվեց ու միքանի որից հետո հայտնվեց Բեննետի մոտ:

Ահա այս խոսակցությունը, վոր տեղի ունեցավ  
նրանց մեջ:

— Յես ձեզ հետ կարևոր գործ ունեմ, — ասաց հրա-  
տարակիչը. — ի՞նչ եք կարծում՝ ուր ե Լիվինդստոնը:

— Ճիշտ չգիտեմ:

— Չեր կարծիքով նա կենդանի յե, թե՞ վոչ:

— Գուցե՛ այս, գուցե՛ և վոչ:

— Յես կարծում եմ — նա կենդանի յե, նրան կարելի  
յե դժոնել և ալդ գործը յես հանձնում եմ ձեզ:

— Իսկ ծախսերի մասին մտածել եք:

— Իհարկե. ահա ձեզ առ այժմ հաղար ֆունտ (տաս  
հազար ռուբլի). յերը վերջանան, կստանաք յերկրորդը,  
հետո՝ յերրորդը և այն. միայն թե դժեռք Լիվինդստոնին:

Հորդոն Բեննետը, մի յեռանդուն ամերիկացի, համար-  
վում եր եքսպեդիցիալի հովանավորը: Նա շատ անդամ եր  
փող տվել, կամ մտանակցել՝ վորպես կազմակերպող: Նա  
եքսպեդիցիաներ եր ուղարկել և դեպի հյուսիս, և դեպի  
տաք յերկրները:

Լիվինդստոնի մասին վոչ մի լուր չկար: Նա ինչ վոր  
կատարել եր Աֆրիկայում, կարող եր կորցնել իր հետ:  
Պետք եր փորձել դժոնել նրան, կամ գոնե իմանալ նրա  
մասին՝ ինչ վոր հնարավոր եր:

Ստենլիի մասին Հորդոն Բեննետը մեծ համարում ու-  
ներ: Նրան հայտնի ելին նրա անսովոր յեռանդը, համար-  
ձակությունն ու համառությունը և գիտեր, վոր սարսա-  
փելի Աֆրիկայի խորերը մտնելու համար հենց այդ հատ-  
կություններն ել անհրաժեշտ ելին: Այդ պատճառով ել մի  
ալդպիսի դժվար գործի համար նրան ընտրեց: Ստենլին  
ել իր հերթին եր ուրախ Բեննետի առաջարկի համար:

Վորպես ճանապարհորդության յերակետ ընտրեցին  
Զանդիբար<sup>1</sup> կղզին: Այդտեղ ել Ստենլին իր արշավախում-  
բը կազմեց 192 մարդուց, վորոնցից միայն յերկուսն ելին

<sup>1</sup> Զանդիբարը Հնդկական ովկիանոսի կղզիներից մեկն է,  
վոր հեռու չե Աֆրիկայի արևելյան ափերից:

ցեվրոպացի, մնացածները Զանզիբարի և Աֆրիկալի սեամորթներից ելին:

Ստենլին վոչ միցուցմունք չուներ, թե ի՞նչ պիտի վերցնել ճանապարհի համար, ի՞նչպես պարենավորել եքսպեդիցիան, բեռներն ինչով տանել և ալին: Այս պատճառով ել սկզբում շատ անհաջողությունների հանդիպեց.—ձիերը ստակուում ելին թունավոր միջատների խալթվածքներից, տեղացիք նրանց առաջանալուն արգելք ելին հանդիսանում: Ստիպված ելին ամեն գյուղում հարկ վճարել:

Դրամի փոխարեն ավելի լավ համարեցին վերցնել հույններ, չթեղեն, դեղեր, հրացաններ, վոր տեղացիք փոխում ելին մթերքների հետ:

Բարեբախտաբար Ստենլիի խմբում միքանի հուսալի մարդիկ կալին, վորոնք մի անգլիական եքսպեդիցիա ելին տարել մինչև Յեղիպտոս: Այս մարդիկ Ստենլիին վորոշ խորհուրդներ տվին: Բայց նրանցից վոչ մեկը ճանապարհ չգիտեր: Եքսպեդիցիալի համար գնած իրերը Ստենլին կապոցներ արագ, վոր շալակած տանում ելին բեռնակիրնեղբերը: Շատ ծանր բեռների համար միքանի եշ ձեռք բերին:

Անապատ տեղերով անցնելիս Ստենլին քարավաններ եր ուղարկում, վոր պատշեր գտնեն և ունեցած իրերը մթերքների հետ փոխեն: Ճանապարհը շատ եր դժվար:—յերեհմն գետերի ելին հանդիպում, վորոնց անցնելու համար գերաններից կամուրջ ելին շինում: Երբեմն արոպիքական անտառներ ելին անցնում, ուր բազմաթիվ հյուսվառ բռւյսեր ուղղակի ցանց ելին կազմում: Նրանց վուները խրվում ելին գետնին փոտած տերևների մեջ, իսկ ահագին փշերը շորեր ելին պատառուում ու մորթ չանգուսում: Բեռնակիրները հրաժարվում ելին առաջ գնալուց և հաճախ այնքան մեծ վարձ ելին պահանջում, վոր տարած ապրանքն այդքան չարժեր:

Պետք եր Ստենլիի հնարագիտությունն ու յեռանդը, վորպեսզի կարելի լիներ այդ պայմաններում առաջ գնալ:

Ամենից վատն այն եր, վոր Ստենլին համոզված չեր, թե  
ինքը ճիշտ ճանապարհն երուել: Լիվինդստոնի տեղը նա  
հաստատ չգիտեր, այլ միայն լենթադրություններ կարող  
եր անել: Տեղացիների հարց ու փորձից վոչինչ չեր դուրս  
դալիս: Սակայն Ստենլին չեր ընկճվում. նույնիսկ լավ  
լեղանակներին սքանչանում եր բնության գեղեցկություն-  
ներով: Նա շատ եր ցավում, վոր չեր կարողանում գիտա-  
կան նպատակներով կանգ առնել: Պետք եր շտապել, այ-  
լապես խումբը կարող եր ցըվել:

Եերեք ամիս ծանր ճանապարհ գնալուց հետո Ստեն-  
լին պատահեց փղոսկրի առևտրական մի արարի, վոր  
հայտնեց, թե Ունիանիջիրու գավառում մի սպիտակ մարդ  
ե ճանապարհորդում:

Ստենլին այն կողմն ուղևորվեց՝ լենթադրելով, վոր  
հենց այդ սպիտակ մարդն ել ինքը Լիվինդստոնն ել լի-  
նելու:

Առաջին հանդիպած գլուղում Ստելին հիվանդացավ և  
յերեք ամիս պառկեց: Ստենլին մեծ դժվարությամբ նորից  
հիսուն մարդ ժողովեց, վարոնց հետ ել, հենց վոր առող-  
ջացավ, շարունակեց ճանապարհը:

Քանի գնաց, ճանապարհն ավելի դժվարացավ: Խիս-  
թիկերն ու փշերը փակում ելին նրանց ճանապարհը: Ստիպ-  
ված ելին կտրտել, շավիդ բանալ և դանդաղ կերպով ա-  
ռաջ շարժվել: Հինգ որ շարունակ մեր ճանապարհորդներն  
անջուր անապատով ելին գնում: Ստենլին գործ եր դնում  
բեռնակիրների հետ վարվելու իր բոլոր շնորֆը. աշխատում  
եր համոզել, որավարձն ավելցնել, միայն թե շուտ դըտ-  
նեն «սպիտակ մարդուն»:

Վերջապես նրանք հանդիպեցին մի արաբական քա-  
րավանի: Արաբները հայտնեցին, թե Ուջիջի գլուղում մի  
սպիտակ մարդ ե ապրում. նա ծեր ե, ոյերեսին սպիտակ  
մազեր կան. նա հիվանդ ե. մենք 8 որ առաջ ենք տեսել  
նրան»:

Ստենլիի համար պարզ եր, վոր դա Լիվինգստոնն եւ:  
Յեղ իրոք, հենց վոր Ուջիջի մտավ, նրան շըջապատեց  
արաբների մի խումբ, վորոնց մեջ մի յեվրոպացի լել կար:  
Ստենլին մեկեն հասկացավ, վոր սա Լիվինգստոնն եւ:

«Այս հանդիսավոր բովելին, զրում եւ Ստենլին իր  
«Յես ինչպես գտա Լիվինգստոնին» գրքում, ինձ միայն  
կեղծ ամոթը լետ պահեց Լիվինգստոնի վրա ընկնելուց և  
նրան գրկելուց... Փոխանակ նրա վրա ընկնելու, յես՝ քաշ-  
վելով ժողովրդի ներկայութիւնից և չիմանալով, թե նա  
ինչպես կվերաբերվի իմ վարմունքին, հանգիստ կերպով  
մոռեցա նրան, գլխարկս հանեցի և հարցրի. «Դժւաք եք  
դոկտոր Լիվինգստոնը»:

— Այս,—պատասխանեց նա՝ ուրախ ժպիտով:

— Բախտավոր եմ,—ասաց Ստենլին,—վոր վերջապես  
պատահեցի ձեզ:

— Յես ել եմ բախտավոր, վոր կարող եմ ձեզ ըն-  
դունել ինձ մոտ:

Մրանից հետո նրանք բարեկամացան:

Մի քանի շաբաթ հանգստանալուց հետո Ստենլին Լի-  
վինգստոնի հետ միասին գնաց հետազոտելու Տանգանայ-  
կա լիճը, վոր գտնվում եւ միջին Աֆրիկայում:

Դրանից հետո Ստենլին պիտի վերադառնար Յեվրո-  
պա: Նա շատ աշխատեց համոզել Լիվինգստոնին գնալ իր  
հետ, բայց Լիվինգստոնը վճռել եր շարունակելիր հետազո-  
տութեալը: Ստենլին Լիվինգստոնի համար պաշար ու փող  
թողնելով, ինքը գնաց:

Լոնդոն հասնելուն պես Ստենլին գրեց «Յես ինչպես  
գտա Լիվինգստոնին» գիրքը, վորտեղ մանրամասն նկա-  
րագրում եր իր առաջին ճանապարհորդությունը դեպի  
Աֆրիկա և հանդիպումը Լիվինգստոնի հետ:

Շատ շանցած, Լիվինգստոնի մահվան լուրը հասավ:  
Տեղացիք նրա դիակը զմուեցին ու Զանգիբար հասցըին,

այստեղից ել Հոնդոն հասցըին։ Իր դեպի սևամորթներն ունեցած վերաբերմունքով Լիվինգստոնը գրավել եր նրանց սերն ու հարգանքը։

Լիվինգստոնի մահից հետո Ստենլին սկսեց գրել իր լերկորդ գիրքը Լիվինգստոնի մասին։ Նրա վերնագիրն եր։ «Դավիթ Լիվինգստոնի կյանքն ու ճանապարհորդությունը»։

Այդ գիրքը գրելիս Ստենլին վճռեց վերջացնել Լիվինգստոնի սկսած ուսումնասիրությունն, ուստի մասնեց նորից Աֆրիկա գնալ։

Այդ ճանապարհորդության համար անհրաժեշտ փողը նա դարձալ նույն հրատարակիչ Բեննետից ստացավ։ Բացի դրանից մեծ գումար ուղարկեց նաև անգլիական մի լրագիր։ Սա ցուց ե տալիս, թե Ստենլին այդ ժամանակինչ հոչակ ու վստահություն եր վայելում։

Ստենլին 1872 թվին հասավ Բահամուո, վոր գտնվում ե Աֆրիկայի արևելյան ափում։ Այստեղից ել պիտի սկսեր իր ճանապարհորդությունը։

Նրա քարավանը բաղկացած եր 366 բեռնակիրներից ու դինված մարդկանցից։ Սպիտակները միայն յերեք ելին։

Բահամուից քարավանն ուղղվեց դեպի Վիկտորիա լիճը, վոր Ստենլին մտագիր եր նախակով անցնել։ Այդ նավակը տանում ելին բեռնակիրները քանդած վիճակում։

Էճի ճանապարհին նրանք դեմ առան վայրենի լեռների։ Շուրջը վոչ բոսականություն կար, վոչ կենդանի։ Ճանապարհորդների պաշարը վերջացավ։ Այդ տեղերն անցնելիս մոտ հարզուր հոգի մեռան։

Մի անգամ քարավանի վրա հանկարծ զինված տեղացիներ ընկան։ Կորիկ տեղի ունեցավ։ Ստենլին ջարդեց նրանց և կարող եր ճանապարհը շարունակել, բայց 25 սպանված, մի այդքան ել վիրավոր եր կորցրել։

Յերկու ամսից հետո Ստենլին հասավ Վիկտորիա լճին։ Այստեղ շրջակայթի բնությունը շատ եր հարուստ։ Ենունդն ապահովված եր։ Այս պատճառով Ստենլին իր

ուղեկիցներին հանգիստ սրտով թողեց լճի ափին, իսկ ինքը տասը վստահելի մարդկանց հետ նավակով անցավ մյուս ափը:

Նրանց ճանապարհը շատ եր վտանգավոր: Փոթորիկ-ներն սպառնում ելին փշրել նրա նավակը: Լճի հատակի մասին Ստենլին վոչինչ չգիտեր, իսկ ստորջրյա քարերը կարող ելին ծակել նրա նավակը: Ափերի բնակիչները մեր ճանապարհորդներին թշնամաքար ընդունեցին:

Վերջապես նավակն ափ հասավ: Ստենլին իր ընկերներով ընկավ Ուգանդու շրջանն, ուր տեղացիների կողմից սիրալիր ընդունելութիւնն զտափ: Նրանց առաջնորդ Մտեղան շատ լավ վերաբերմունք ցուց տվավ Ստենլիին և սպնեց վերադառնալու մյուս ափին, ուր նրա քարավանն եր մնացել: Հետն առնելով իր մյուս ընկերներին ևս, Ստենլին անփորձ կերպով վերադարձավ Ուգանդու:

Ստենլիի քարավանն Ուգանդուից շարժվեց դեպի արևելք: Ճանապարհին նրանց առաջն յելավ նեղերի առաջնորդի մեծ և ուժեղ զորքը: Արյունոտ ընդհարումից խուսափելու համար Ստենլին ճանապարհը թեքեց դեպի հարավ, դեպի Տանգանայկա լիճը, վոր նա մի անգամ հետազոտել եր լիվինգստոնի հետ միասին:

Բայց Տանգանայկա լճի նոր ուսումնասիրությանն անցնելուց առաջ Ստենլին վճռեց գնալ Ուջիջի՝ Լիվինգստոնի կյանքի վերջին օրերի մասին տեղեկություններ ժողովելու: Այս ծրագիրն իրագործելուց հետո մեր ճանապարհորդներն ուղևորվեցին դեպի լուալաբա մեծ գետը, վոր Լիվինգստոնի կարծիքով նեղոսի սկիզբը պիտի լիներ:

Այս ճանապարհը շատ եր դժվար: Հարկ յեղավ անցնել այնպիսի անտառներով, վորոնք ավելի վայրի ելին, քան այն անտառները, վորոնց հանդիպել եր լիվինգստոնի մոտ գնալիս: Խոտերն ու թփերը լիքն ելին թունավոր ոձերով, անտառներում գիշատիչ թոշուններ ու գաղաններ ելին վխտում: Ստենլիի մարդկանց թիվը հետզհետեպակա-

սում եր, վորովհետև նեգրերը չուզելով այլաս առաջ գնալ, վերադառնում ելին։ Յերբ վերջապես ճանապարհորդները Նյուանգուեքաղաքը հասան, տեղացիք պատմեցին, թե այդտեղից վոչ մի յեվրոպացի չի կարողացել առաջ գնալ, վորովհետև այդտեղից անանցանելի անտառներ են սկսվում, վորոնց մեջ նույնիսկ տեղացիք սիրտ չեն անում մտնել։ Նրանք համոզված ելին, թե այստեղից վոչ մի մարդ կենդանի չի վերադառնալ։

Բայց Ստենլին վճռեց փորձել անցնել արդ անտառը։ Խմբի մարդկանցից վոչ վոք չուզեց նրան ընկերանալ. բարեբախտաբար արաբական առաջնորդ Տիպու-Տիպն ոզնեց Ստենլին։ Նա 700 կռվողներ տվավ, ինքն ել հետները գնաց։ Սրանից հետո զանդիբարցիք նույնպես համաձայնեցին ուղեկցել նրան։

Անտառում շատ դանդաղ ելին առաջ շարժվում։ Տերմների խտությունից շատ եր մութն։ Թունավոր շոգիացումներն ու մաքուր ողի բացակայությունը ուժերի հրսկալական լարումն ելին պահանջում։

Յերբեմն իրեն, Ստենլիին այնպես եր թվում, թե տեղ չեն հասնելու։ Ուժերը հետզինետ պակասում ելին։ Վերջապես սարսափելի անտառը վերջացավ։ Ստենլիի աշքերի առաջ մեծ գետ եր փոված։ Անսահման ուրախություն պատեց նրան։ Ահա և ցականցած Լուալաբան։ Նեղման եր արդյոք—ինչպես կիվինգստոնն եր կարծում։ Այժմ Ստենլիին մնում եր հետազոտել այդ գետի հոսանքը. իսկ դրա համար պետք եր նավակով անցնել մինչև ովկիանոսին հասնելը։

Տիպու-Տիպը վճռեց յետ դառնալ. Ստենլիի հետ կապած պայմանաժամը լրացել եր. բացի զրանից նրա զորքն ել զգալի կերպով պակասել եր։ Ստենլին մաց 150 զանդիբարցիներով։ Նավակներ սարքելով, մեր ճանապարհորդները լողացին գետի հոսանքով դեպի ցած։ Մի քանի ժամանակից հետո նրանց տեղացիներ՝ շրջապատեցին՝ «մի» ս,

մի՞սա աղաղաղակներով: Դրանք մարդակերներ ելին: Ստիպ-  
ված զենքի դիմեցին: Միայն Ստենիի համարձակությունն  
ու յերկաթի ընավորությունը փրկեցին նրանց մարդա-  
կերներից:

Համարյա անընդհատ ստիպված ելին կռվել գետափ-  
նյա կատաղի ընակիչների հետ: Այս հանգամանքը շատ եր  
դժվարացնում նրանց առաջ շարժվելը: Թշնամի ընակիչ-  
ներից ուտելու պաշար ստանալն անկարելի յեր: Ճանա-  
պարհորդներն ստիպված ելին սնվել միայն այն պտուղ-  
ներով, վոր ժողովում ելին ափերում:

Դետով լողալը չափաղանց դժվար եր նաև այն պատ-  
ճառով, վոր ճանապարհին ջրընկեցներ շատ ելին պատա-  
հում: Ստիպված ելին լինում նավակներն ափով քարշ տալ՝  
մինչև վոր գետը նորից սկսում եր հանդարտ հոսել:

Սրա համար շատ ժամանակ և ուժ եր հարկավոր:  
Յոթ ջրվեժներ մինչև այսոր ել Ստենլիի անունով են  
կոչվում:

Հետզինետե գետի հոսանքը հանդարտ դարձավ և յեթե  
պաշարի պակասությունը շլիներ, ճանապարհորդությունը  
կարելի յեր դժվարներից չհամարել: Վերջապես նրանք  
գետաբերանին հասան: Այստեղ այլևս թշնամի տեղացի-  
ներ չկային, սակայն հիմա յել գետն եր կատաղի դառել:  
Զուրը յերբեմն վեր երբարձրանում, յերբեմն ելիջնում եր  
գլխապտույտ արագությամբ: Ստիպված յեղանակի դուրս  
դալ և ընթացքով գնալ: Տասն որից հետո Ստենլին ու իր  
ընկերները հասան Ատլանտյան ովկիանոսին:

Դժվար ճանապարհը վերջացավ: Ստենլին մինչև ով-  
կիանոս հետեւց գետի հոսանքին և գտավ, վոր դա կոնդո  
գետն ե, աշխարհի ամենից մեծ գետերից մեկը, իսկ լուա-  
լաբան, վոր կիվինգստոնը նեղոսի տեղ եր ընդունել, կոն-  
դուի վտակն եր: Այս գլուխից հետո Ստենլին իր աֆրիկ-  
յան յերկը ճանապարհորդությունը վերջացած համարեց:

Նա զինվորական նավ նստեց, վոր իր սեամորթ ու-

Դեկիցներին Զանզիբար հասցնի: Այստեղ նա իր ամբողջ խումբը թողեց, իսկ ինքը վերադարձավ Յելոպա: Այդ ճանապարհորդությունը տևեց 2 տարի և 4 ամիս:

Անգլիա վերառնալուց հետո Ստենլին մի գիրք գրեց՝ դեպի Աֆրիկա կատարած իր լերկրորդ ճանապարհորդության մասին և մանրամասն նկարագրեց իր հայտնաբերած կոնգո գետի ընթացքը:

Իր գրվածքների ու հայտնաբերումների շնորհիվ Ստենլին համաշխարհային հոչակ ստացավ:

Բելգիական Լեոպոլդ թագավորը նրան առաջարկեց պետություն հիմնել Կոնգոյի ափերում:

Այս նպատակով Ստենլին 1879 թվին լերկրորդ անգամ ճանապարհորդեց դեպի Աֆրիկա, ուր այս անգամ ապրեց մոտ 5 տարի: Նա կոնգո պետության միքանի քաղաքներ հիմնեց: Այս նոր պետության մեջ ստրկավաճառությունը խստիվ արգելված եր:

Տեղացիք, վոր սկզբում թշնամաբար ելին վերաբերվում դեպի Ստենլին՝ իրեն սպիտակ մարդու, հետզհետեսկսեցին սիրել ու հարգել նրան, նրա անվախ ու լեռանդության քնավորության համար: Նեղբերը տեսնում ելին, թե ինչպես Ստենլին անմատչելի ժայռերը քաղաքների լեկերածում, անտառներով ու լեռներով ճանապարհներ են ձգում: Հենց սրա համար ել նրան «Բուլա Մատարի» անվանեցին, վոր «Ժայռեր կործանող» են նշանակում:

Կոնգոյով ճամբորդելն այս վտանգների հետ չեր կապված, վոր լերսեմն հերոսաբար հաղթահարեց Ստենլին: Գետով շոգենավեր ելին լետ ու առաջ լողում: Առաջին շոգենավը կոնգոյի վրայով ինքը Ստենլին կառավարեց:

Կոնգոյի հնգամյա անդադրում աշխատանքը հոգնեցրեց Ստենլիին: Նա Յելոպա վերադարձավ հանդստանալու, բայց շուտով հարկ լեղավ նորից Աֆրիկա վերադառնալու:

Այս անգամ նա լեզիպտական կառավարությունից առաջարկ ստացավ՝ Աֆրիկայում Եմին-Փաշալին վնտուել:

Սա հայանի գերմանացի ճանապարհորդ եր: Նրա խսկական անունը Եղուարդ Շնիտցեր եր: Շնիտցերն առանց դրամական միջոցների զնացել եր Յեգիպտոս՝ գիտական հետազոտութիւններ կատարելու և յեգիպտական պաշտոնյա յեր դարձել: Կառավարությունը նրան ուղարկեց Սուդան<sup>1</sup>: Ալստեղ նա մուսուլմանական Եմին-ֆաշա անունն եր ընդունել: Տասը տարի շարունակ Եմին-ֆաշան Սուդանի բնության գիտական գիտութիւններ եր կատարում: Իր դիտումների արդյունքը նա հաղորդում եր Յեվրոպային:

Տասնիններորդ դարի 80 ական թվականներին Սուդանում սրբազն պատերազմ պայթեց: Եմին-ֆաշան կրտրվեց Յեվրոպայից և չկարողացավ վոչինչ հաղորդել: Միքանի տարի շարունակ վորոնում ելին նրան: Վերջապես Ստենլին հանձն առավ նրան գտնել:

Նա նավով հասավ Կոնցոլի գետաբերանը, վորտեղից իր ծանոթ գետով բարձրացավ վերև: Միջին Աֆրիկայի Ալբերտ լճի մոտ նա գտավ Եմին-ֆաշային և նրա հետ միասին հասավ մինչև Զանզիբար:

Ալսպիսով Ստենլին ամբողջ Աֆրիկան յերկու անգամ կտրեց. — յերկրորդ ճանապարհորդության ժամանակ՝ արեւվելքից արևմուտք, խսկ ալժմ՝ արևմուտքից արևմելք:

Սա նրա վերջին ճանապարհորդությունն եր: Անգլիա վերադառնալուց հետո նա սկսեց իր գրքերով զբաղվել, վորոնց մեջ նկարագրեց Աֆրիկայի բնությունը և խստ ծառացավ գերեվաճառության դեմ:

Ստենլին մեռավ 1904 թվին:

Ստենլիի ծառակությունները՝ վորտես ճանապարհորդի և ուսումնասիրողի, ահազին են:

Միջին կամ ներքին Աֆրիկան, վոր առաջ մի անհայտ լերկիր եր, ալժմ գիտենք, վոր բազմաթիվ գետեր, լճեր և գլուղեր ունի: Յերկրի ներսում մոտ 5000 կիլոմետր նա-


<sup>1</sup> Հյուսիսային Աֆրիկայում:

վարկելի ճանապարհներ լայն հնարավորություններ են տա-  
լիս Աֆրիկայի ապագա հետազոտման համար։ Յեզ սրանով  
աշխարհը պարտական է Ստենլիին—գիտության այս ան-  
խոն ջ մարտիկին և անվեհեր ճանապարհորդին։

Ալսպես—անհայտ ու անպաշտպան տղան, վոր շըր-  
ջապատողների մեջ զզվանք եր առաջացնում միմիայն նրա  
համար, վոր ապորինի ծնունդ եր, հասարակությունից  
մերժվածը—կյանքի մեծ ճանապարհ անցավ։ Վոչ միայն  
իր հայրենիքն, այլ և ամբողջ աշխարհը ճանաչեց նրան՝  
շնորհիվ նրա խելքի, համարձակության ու տոկունության։

Յեզ այն Անգլիան, վոր այնքան մեծամտորեն հրա-  
ժարվում եր անհայտ ծագում ունեցող տղայից, այսոր ել  
պարծենում է Ստենլիով, վորպես իր ամենամեծ հերոսով։

ԶԵՄԱ ԿՈՒԿԻ  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ



## I

Զեմս Կուկը ծնվել է 1728 թվին Յորքշիր (Անգլիա-  
լում) քաղաքում, մի գյուղական չքավոր ընտանիքում:  
Հենց վոր Զեմսի հինգ տարին լրացավ, հայրն սկսեց նրան  
իր հետ աշխատանքի տանել մոտակա կալվածքը: Զեմսը  
ընդունակ և հասկացող յերեխա իր: Կալվածատերն սկսեց  
նրանով հետաքրքրվել այնքան, վոր նույնիսկ համաձաւ-  
նեց նրան սովորելու ուղարկել ծխական դպրոցը, այդտեղ  
ել Զեմսն իր սկզբնական կրթությունն ստացավ:

Նա 13 տարեկան եր, յերբ հայրը նրան աշակերտ  
տվավ մի գլխարկ կարողի: Այս արհեստավորն ապրում եր  
Ստելտե ծովափնյա փոքրիկ քաղաքում: Քաղաքի ազգա-  
բնակության մեծ մասը ձկնորսներ ելին, վորոնք իրենց  
կյանքի մեծ մասը ծովի վրա ելին անց կացնում: Իսկ  
Զեմսն ստիպված եր աշխատել խեղդուկ արհեստանոցում,  
մի բան, վոր նրան բնավդուր չեր գալիս: Նա հաճախ նախան-  
ձով եր նալում իր մոտով անցնող նավերին և խնդրում եր  
ծնողներին, վոր իրեն ել թուլլ տան ծով դուրս գալու: Ծնող-  
ները համաձայնեցին և Զեմսը կարողացավ նավասենյակի  
սպասավորի պաշտոնով ծառալության մտնել Զոն և Հեն-  
րի Ուորկերների նավի վրա—յոթ տարի պայմանաժամով:  
Այս նավը Անգլիայից Իրլանդիա քարածուխ եր փոխադրում:

Կուկը յոթ տարի շարունակ լողում եր տարրեր ուղ-  
ղություններով և զանազան ծովերի վրա: Այս ժամանա-  
կամիջոցում նա լավ վարժվեց ծովալին ծառալության:

Նըանից այնքան դո՞հ ելին, վոր դարձաւ լոթ տարով պահեցին նավերի վրա՝ այս անգամ արդեն նավաստիի պաշտոնով։ Շուտով նա ավագ նավաստի դարձավ, հետո յել դրանից Ուռկեր լեղալրների նավերից մեկի շկիպեր (կառավարիչ) կարգվեց։

Կուկը 27 տարեկան եր, յերբ Անգլիայի ու Ֆրանսիայի մեջ պատերազմ ծագեց։ Այդ ժամանակ Անգլիայում մի որենք կար, վորի զորությամբ առևտրական նավերի բոլոր նավաստիներն ու ծառայողները պատերազմի ժամանակ պարտավոր ելին ռազմա-ծովային նավատորմն անցնել։ Մկրբում կուկն ուղեց թագնվել, բայց վախեցավ։ Նա լավ գիտեր, վոր ուր ել լինի, կգտնեն։ Այս պատճառով կամավոր կերպով ծառայության մտավ զինվորական «Արծիվ» նավը։

Այս նավի պետը սեր Հոուդ Պալիգերն եր։ Նա շատ շուտ նկատեց, վոր կուկը խելոք ու համարձակ նավաստի յեւ և կարճ ժամանակից հետո ավագ բոցման կարգեց նրան։ Կուկը կարողացավ այնքան վստահություն ձեռք բերել, վոր կվերեկա և կանադե քաղաքների պաշարման ժամանակ չափազանց կարեռ ու վաճանդավոր հանձնարարություն ստացավ։ Գետք եր հետախուզել ու Լավրենտիոս գետի հատակը՝ Որլեն կղզու և հյուսիսային ափի մեջ։ Պիտի աշխատեր ֆրանսիական ամրության հանդեպ։ Աննկատելի մնալու համար կուկը գիշերներն եր աշխատում։

Զնայելով այս նախազգուշությանը, ֆրանսիացիք նկատեցին կուկի նավակն ու նրա դեմ ուղղեցին հնդկական նավակների մի ամբողջ տորմիդ։ Միայն իր սառնասրտության ու անվեհերության շնորհիվ կուկը կարողացավ ադատվել հարձակվողներից և թագնվել ափում։

Գետի չափումները կուկը շատ լավ կատարեց և ծովակալ Մնողենը նրան ավելի պատասխանառու գործ հանձնեց։

Կուկը պիտի կազմեր ու Լավրենտիոսի հոսանքի աշ-

խարհագրական քարտեղը՝ ակունքից մինչև գետաբերանը:

Նա այս հանձնարարությունն այնքան ճիշտ ու մանրազնին կատարեց, վոր անգլիական ծովալին վարչությունն ալդ քարտեղը հրատարակեց: Բայց չնայած այս հաջողություններին, կուկը հասկանում եր, վոր միայն գործնական փորձառությունը քիչ է: Անհրաժեշտ ե նաև գիտական պաշտությունը: Այդ թերին լրացնելու համար նա սկսեց պարապել լերկրաչափությունով, աստղաբաշխությունով և ուրիշ մատեմատիկական գիտություններով:

Անգլիացիք գրավեցին Նյու-Ֆառնյարի կղզին և կուկին հանձնարարեցին՝ կազմել ալդ կղզու քարտեղը: Կուկը լերեք տարի անցը եց Նյու-Ֆառնյարի կողման իր վրա դարձրեց անգլիական ծովալին նախարարության ուշադրությունը: Բացի կղզում կատարած իր հիմնական աշխատանքից, նա պարապում եր նաև աստղաբաշխությամբ: Նա արեկի լրիվ խավարման մասին իր դիտողությունները ներկայացրեց Բրիտանական Աստղաբաշխական Ընկերությանը: Այդ աշխատությունը տպագրվեց Ընկերության դիտողություններում:

## II.

Մի շատ հետաքրքիր լերեռությունը եր սպասվում 1769թվին: Վեներա մոլորակը պիտի անցներ արեկի սկավառակի վրայով—այսինքն ճիշտ լերկրի ու արեկի միջով: Սրա կարենությունը կայանում եր նրանում, վոր հնարավոր եր դառնում վորոշել լերկրի հեռավորությունը արեկից:

Դիտողությունների համար ամենից հարմար տեղ համարվում եր հարավալին կիսագունդը: Անգլիական կառավարությունը վճռեց ալգաեղ գիտարշավ ուղարկել: Գիտարշավը պիտի գնար հենց նոր հայտնաբերված թալիթի կղզին և այնտեղ դիտողություններ կատարեր:

Բացի այս գլխավոր աշխատանքից գիտարշավը ման-

բամասն պիտի ուսումնակրեր Խաղաղ ովկիանոսը և հայտնաբերեր հարավալին մայր ցամաքը:

Այս ցամաքը, ինչպիս այդ ժամանակի գիտուններն ելին լենթաղրում, պետք ե վոր գտնվեր լերկրագնդի հարավալին մասում։ Վորովհետև հյուսիսալին կիսագնդում շատ մեծ ցամաքներ կալին, ուստի ժամանակի գիտունների հաշվով, լերկրագնդի հավասարակշիռը պահպանելու համար նույնքան ցամաքներ պիտի գտնվելին նաև հարավալին կիսագնդում։

Յենթաղրում ելին այդ գիտարշավի պետ նշանակել ալր ժամանակի հռչակավոր գիտնական ու ճանապարհորդ Դավիթպետին։ Սակայն Դավիթիմպետի առաջարկած պարզանաներն անընդունելի թվացին։ Այդ ժամանակ ծովալին վարչության քարտուղար Մտիֆենսն առաջարկեց գիտարշավի պետ նշանակել Զեմս Կուկին։ Առաջարկությունն ընդունվեց և 1768 թվին Կուկը նշանակվեց «Ենդեվեր» նավի նավապետ։ Սա տասնթնդանոթավոր մի նավ եր՝ 84 ծառայողներով։

Բացի նավապետից և ծառայողներից, գիտարշավի մեջ մտան նաև—աստղաբաշխ Թրինը, դոկտոր Սոլանդերը և բնախույզ Յենկսը։ Վերջինս շատ ոգտակար ուղեկից եր, վորովհետև վտանգավոր ծովալին ճանապարհորդությունների շատ եր մասնակցել։ Հետները բժիշկ ևս ունելին։

«Ենդեվեր» 1768 թվի վերջին դուրս լեկավ Պլիմուտ նավահանգստից և լողաց Մադեյրա կղզու մոտով։ Այստեղից Խաղաղ օվկիանոս կարելի լեր անցնել լերկու ճանապարհով։ — առաջինը՝ Մադեյրանի նեղուցով, իսկ լերկորդը՝ Հորն հրվանդանի մոտով։ Կուկը բռնեց լերկորդ ճանապարհը, թեպետ ժամանակի ծովագնացներն այդ ճանապարհն ավելի վտանգավոր ելին համարում։ Հետազայում պարզվեց, վոր Կուկի ընտրությունը միանդամայն ճիշտ ե լեղել։ Այդպիսով նա շահեց միքանի որ, ճանապարհն ել առաջինից պակաս վտանգավոր եր։

Կուկի և Դրինի միասին կատարած աստղաբաշխական դիտումները, Հորն հրվանդանից անցնող նավագնացների համար Կուկի կազմած հրահանգը հեղտացրին հետադա նավագնացների ճանապարհորդությունը և ուղղեցին աշխարհագրական քարտեզը:

Հորն հրվանդանն անցնելով, Կուկը մի քանի կղզիներ հայտնաբերեց, վորոնք ծածկված ելին տրոպիկական վառ բուսականությամբ:

«Ենդեմիերը» 1769 թվի հունիսի 13-ին կանգ առավ Թալիթի կղզու Մատավալ նավահանգստում: Կուկն անծանոթ լինելով տեղացիների բարքերին, վախենում եր նրանց հարձակումներից: Այս պատճառով նա նավաստիներին հրամայեց աստղադիտարանն ափում այնպես դասվորել, վոր կարելի լինի պաշտպանել նավից՝ հրետանու կրակով: Յերբ դիտարանը պատրաստվեց, ճանապարհորդներն իրենց գործին անցան: Վեներայի նկատմամբ կատարած դիտումների արդյունքն այնքան հաջող եր, վոր ամբողջ 60 տարի դեռ գիտական ժամանակակից մնաց:

Աստղաբաշխական հետազոտումներից բացի Կուկը և Բենկսը տեղացի կենցաղն ել ելին ուսումնասիրում: Իր հուշադրերում Կուկը նշում ե նրանց մի շատ բնորոշ գիծը, — կատարյալ բացակալություն սեփականության այն հասկացողությունների, վորոնք հատուկ են բոլոր լեվրոպացիներին: Թալիթիի բնակիչները ճանապարհորդներից ինչ ասես գողանում ելին և դրանում նրանք պախարակելի վոչինչ չելին տեսնում: Բոլորովին այլ եր նավաստիների վերաբերմունքը և այս հողի վրա ընդհարումները պակաս չելին: Յերկրորդ բնորոշ գիծը, վոր Կուկը նկատել եր տեղացիներում, այդ նրանց ծալրահեղ բարեհոգիլինելն եր: Վայրենիները շուտ ելին մոռանում ստացած վիրավորանքը և նրանց ու նավաստիների մեջ բարեկամական հարաբերություններ ստեղծվեցին: Հուլիսի 7-ին

անգլիացիք սկսեցին յետ դառնալու պատրաստություններ տեսնել: Բազմաթիվ տեղացիներ հրաժեշտի յեկան: Դրանց մեջ եր նաև թալիթեցի Տուպիան, վոր յեկել եր իր 13 տարեկան տղայի հետ: Նա Կուկին խնդրեց, վոր թուլլ տա ուղեկցել արշավին: Կուկը նրան հետը վերցրեց:

Թողնելով Թալիթին, Կուկն ուղևորվեց դեպի արևմուտք՝ հետազոտելու ովկիանոսի այդ մասում գտնվող կղզիները: Ճանապարհին շատ տեղացիներ մոտեցան նրանց իրենց բարձարաներով<sup>1</sup>:

Կուկը խնդրեց նրանց իր նավը մտնել, սակայն նըրանք սկզբում հրաժարվում եին, Բայց Տուպիային տեսնելուց հետո նրանք այլևս չեին վախենում և շատերն «Ենդեվեր» բարձրացան: Տեղացիներն ել իրենց հերթին՝ խնդրեցին անգլիացիներին՝ գնալ իրենց կղզիները: Այդ կղզիներում գիտարշավին ցույց տված ընդունելությունը շատ եր սրտագին: Նույնիսկ Հուահեյնե կղզու առաջնորդը Կուկի հետ լեղբարացավ: Տեղական սովորության համաձայն այդպիսով նա սկսեց իրեն Կուկե անվանել, իսկ նավապետ Կուկին իր անունը — Որե — տվավ:

Այս բոլոր կղզիները Կուկն անվանեց «Ընկերության կղզիներ»:

Այդ կղզիները հետազոտելուց հետո Կուկն ուղևորվեց դեպի հարավ-արևմուտք: Շուտով եքսպեդիցիան հասավ այն տեղին, ուր վոչ վոք հարավային ճանապարհորդներից դեռ չեր հասել: Այս ճանապարհորդությունը տևեց 40 որ և Կուկը վոչ հող տեսավ, վոչ ել «յերկի հավասարակըշությունը պահպանող» ցամաք:

Իր քառամնորյա ճանապարհորդության վերջում Կուկը հասավ նոր Զելանդիա՝ կղզուն, վորը դեռ հոլանդացի ճանապարհորդ Տասմանի ժամանակներից նույն հարավային ցամաքի մի մասն եր համարվում:

<sup>1</sup> Բարձարա—ծովային կենդանիների մորթով պատաժ նաև կակներ:

Կուկը տեսավ ու համոզվեց, վոր Նոր Զելանդիան յերկու կղզիներից և կազմված։ Տեղացիք հին կղզին անվանում ելին Թավալի-Պունամու։ Նա շատ դաժան կլիմա ուներ և համարյա անմարդաբնակ եր։ Հյուսիսային կղզին, Թե-իկա-Մառին, աչքի յեր ընկնում իր տրոպիքական խիտ բուսականությամբ, անտառածածկ մեծ լեռներով, վորոնք կղզուն գեղարվեստական տեսք ելին տալիս։

Թե-իկա-Մառի բնակիչները բարձրահասակ ելին, վալելչակաղմ, շատ ուժեղ ու ճարպիկ։

Ի գեղ՝—անգլիացիներին շատ զարմացրեց այն, վոր նրանք կարողանում ելին 20—40 հոգի տանող բարդարաներ շինել։ Այս բարդարաները փալտե գեղեցիկ փորվածքներ ունելին և զարդարված ելին լինում սև ծոպերով (бахромա), նորդելանդացիք գեղեցիկ զարդարելու շնորք ունելին. այդ բանը յերևում եր նաև իրենց մարմինները ներկելուց, վոր յուրատեսակ գեղեցկության եր հասել։

Նոր Զելանդիայում Կուկին շատ անբարլացակամ ընդունեցին։ Հենց առաջին հանդիպումից մեր ծովագնացներն ստիպված յեղան հրազենների ոգնության դիմել։ Հետագա ընդհարումները, Կուկի կամքին հակառակ, արյունիեղությունների հանգան։ Բայց և այնպես Կուկը կարողացավ ուսումնասիրել Նոր Զելանդիայի ափերը։ Այդ աշխատանքը նա կատարեց մոտ յերեք ամսում։

Նոր Զելանդիայից Կուկն ուղևորվեց գեղի արևմուտք, դեպի Ավստրալիայի արևելյան ափերը։ Ավստրալիայի այս մասերի ընակիչները սև վայրենիներ ելին, վորոնք թալիթեցիներից ու նորդելանդացիներից շատ բանով ելին տարբերվում։ Նրանց կաշվի գույնն ավելի մութ եր, իսկ լեզուն անհասկանալի յեր նույն իսկ Տուպիայի համար։

Նրանք զինված ելին յերկան նիզակներով և փալտե կարծ մահակներով, վորոնք տեղացիների լեզվով բումերանգ ելին կոչվում։ Այդ մահակն աղեղի ձեւ ուներ և

լեթե հմուտ և ուժեղ ձեռքով եր գցվում, ավերիչ ուժով  
եր դիպջում: Իսկ յեթե նետողը վրիպում եր, նա կը կին  
իր տիրոջն եր վերադառնում:

Ավստրալիացիների բարքերը խիստ ելին և դաժան: Անկարելի յեղավնրանց հետ բարեկամական կապ հաստատել: Հենց վոր ճանապարհորդները փորձեցին ափ դուրս դալ, տեղացիք այնպիսի կատաղի դիմադրություն ցուց տվին, վոր Կուկն ստիպված յեղավ Ավստրալիայի արեւլլան ափերով գեպի հլուսիս շարժվել:

Այս լողի ժամանակ մի դժբախտություն պատահեց. «Ենդեվերը» կորալի խութերի դիպավ: Տեղից շարժելու համար հարկ յեղավ նավի քաշը պակսեցնել: Մրա համար կուկը հրամայեց գեն գցել վեց թնդանոթ և այն բոլորը, առանց վորի կարելի յեր մի կերպ յոլա գնալ: Բայց այս միջոցը վոչինչ չփոխեց: Նավը չեր շարժվում: Դրությունը հետզհետե վտանգավոր եր դառնում: Նավը ծածկվեց և սկսեց ջուր ներս թափել: և չնալած, վոր յերք ջրհաններ ելին աշխատում, այնուամենանիվ ջուրը հետզհետե ավելանում եր և յեթե նամաս ապառաժից հեռանար, նույնիսկ խորտակվել կարող եր: Միաժամանակ վտանգավոր եր նաև նույն տեղում մնալը, — փոթորիկը հենց այստեղ կփշրեր նաևն՝ այս ժայռերին դարնելով: «Ենդեվերն» ափից միան հինգ մղոնով եր հեռու, բայց յեղած նավակները բավական չելին: «Ենդեվերում» յեղածը փոխադրելու: Զնայելով անել կացության, նավաստիները կատարլալ կարգ ու հանգստություն պահեցին: Սա այն հարգանքով ու վստահությամբ եր բացատրվում, վոր նրանք տածում ելին դեպի իրենց նավապետը:

Յերբ մակընթացությունն իր գագաթնակետին հասավ, նավը մի փոքր բարձրացավ, վորից հետո կարելի յեղավ նրան ժայռից հեռացնել: Դրությունը չլավացավ, վորով հետեւ ստորին նավախորշը ջուր եր լցվում և հույս չկար, թե կարելի կլինի ափ հասնել: Ալդ ժամանակ Մոնկ-

հառւզը առագաստով փակեց պատռվածքը, վրալից ել բուրդ ու խճուծք (պակլա) կոխեց: Հետևանքն այն յեղավ, վոր ներհոսումը մեկեն դադարեց և նավը բարեհաջող կերպով հասավ Ավստրալիայի արևելյան ափում գտնվող փոքրիկ խորշը: Այստեղ կուկը համոզվեց, վոր նավը կարկատել կարելի յէ և նրանք սկսեցին նորոգել:

Այս հարկադրյալ սպասումի ժամանակ գիտարշավի անդամներից վոմանք սկսեցին տեղն ուսումնասիրել, վորպեսզի կարողանան ուտելիք ճարել: Մի անդամ, այսպիսի վորոնումներից մեկի ժամանակ Տուպիան նկատեց մի մեծ, տարորինակ ու մինչ որս իրեն անծանոթ կենդանի: Նետո պարզվեց, վոր տեղացիք այդ կենդանուն կենդուրու ելին անվանում: Նա աչքի յեր ընկնումնրանով, վոր ձագերին ման եր ածում հետը՝ քսականման մի պարկում: Այս կենդանին ապրում ե միայն Ավստրալիայում: Եքսպեդիցիայի անդամներն առաջին յեվրոպացիներն ելին, վոր կենդուրու ելին տեսնում:

«Ենդեվերը» նորոգել-վերջացնելուց հետո եքսպեդիցիան ուղևորվեց դեպի հյուսիս, վորպեսզի Հնդկական ովկիանոս մտնեն: Ճանապարհի այս մասը շատ վտանգավոր եր: Այդտեղ ովկիանոսը լի յեր ծանծաղուտներով, ստորջրյա ժայռերով ու խութերով: Շարժվել կարելի յեր միայն ցերեկով, բայց և այնպես քիչ եր մնում «Ենդեվերը» նորից ընկներ ստորջրյա ժայռերի վրա: Բարեբախտաբար մի թեթև քամի բարձրացավ, վոր հնարապորություն տվավ այդ բարյերից մի քանի տասնյակ մետր հեռու անցնել: Այդ անցքն ալժմ ել վտանգավոր ե:

Զնայած այս շրջաններում լողալու վտանգավորությանը, կուկը վճռեց պարզել, թե նոր-Գվինեան Ավստրալիայի մասն ե, թե վոչ: Այս խնդիրը պարզելու համար «Ենդեվերը» պատ տվավ Ավստրալիայի հյուսիսային ծայրը, այստեղ մի քանի կղզիներ հայտնաբերեց, վորից հետո ուղերձվեց դեպի նոր-Գվինեայի հարավային ափը:

Կուկը մի քանի որ շարունակ գնում եր այս լերկրի ափով, սակայն ափ դուրս գալ չկարողացավ։ Տեղացիք հարձակվում ելին մերնավորդների վրա, ուստի Կուկն արյունինեղությունից խուսափելու համար շարունակեց առաջ գնալ՝ առանց ափ իջնելու։ Շուտով նա հասավ Բաթմավիա—Յավա կղզու նավահանգիստը։ Այստեղ ել մեր ճանապարհորդներից շատերն սկսեցին հիվանդանալ։ Հիվանդությունը սաստկացավ մանավանդ «Բարեհուսո» հրվանդանի ճանապարհին։ Քսանլերեք հոգի զոհ գնացին համաճարակին։ Կուկը զրկվեց այսպիսի անփոխարինելի ուղեկիցներեց, ինչպիսիք ելին—աստղաբաշխ Գրին, դոկտոր Մոնկիառուզ, թալիթեցի Տուպիան և իր վորդին։ Վերջապես 1772 թվի հունիսի 11-ին չորսամյա ճանապարհորդությունից հետո Կուկը հայրենիք դարձավ։ Իր առաջին ճանապարհորդության ժամանակ Կուկն; իբրև նավապետ, այնքան սառնասրտություն ու կամքի ուժ հայտնաբերեց, այնպիսի ճշտությամբ կատարեց իր վրա դրած պարտականությունները, վոր մեկեն ճանաչվեց վորպես աչքի ընկնող ծովագնաց և հետազոտող։

Եեթե նկատի ունենանք, վոր Խաղաղ ովկիանոսի այն մասը, վորտեղով Կուկն իր փոքրիկ առագաստանավոր տարավ, այսոր ել մեր կատարելագործված նավերի համար դեռ վտանգավոր ե համարվում, այն ժամանակ պարզ կլինի, թե նրա առաջին ճանապարհորդությունն ինչ փառավոր սիրագործություն եր։

### III

Կուկի առաջին ճանապարհորդությունն իր առաջ դրած հարցերից մեկը չլուծեց։ Հարավային մայրցամաքը, վորի գոյությունը գիտնականների համար կասկածից դուրս եր, դեռ գտնված չեր։ Անգլիական կառավարությունը վճռել եր այս հարցը վերջնականապես լուծել։ Այս պատճառով կազմակերպվեց նոր գիտարշավ, վորի մեջ այս

անգամ լերկու նավ եր մտնում։ Նրանցից մեկը կոչվում եր «Մեղոլուշեն» (վճիռ), նրա նավապետ նշանակվեց Կուկը, մլուսը, վորի հրամանատարն եր Ֆյուրնո, կոչվում եր «Ադվենչեր» (արկած)։ Այս անգամ նավերն ունեցին ամեն անհրաժեշտ բան՝ լերեք աարվա համար։ Յուրաքանչյուր նավում մի փոքր նավ ևս կար՝ քանդած վիճակում, վոր հարկավոր դեպքում մի քանի ժամում կարելի լեր սարքել ու ջուրն իջեցնել։

Այսպիսով այս ճանապարհորդությունն անհամեմատ պակաս վտանգավոր եր դառնում, քան առաջինն եր, վորովհետև նավը վնասվելու դեպքում կարելի լեր նորը ջուրն իջեցնել։

Դիտարշավի մեջ մտան լերկու ընախույզներ—հալր ու վորդի Ֆորստերները, լերկու աստղաբաշխներ—Ռւելս և Բելել և վերջապես նկարիչ Հոջեսը։

Ծովային վարչության ծրագրով Կուկը պիտի լողար մինչև Բարեհուսո և ապա ուղղվեր դեպի հարավ։ Այս ուղղությամբ Փրանսիացի ծովագնացները հայտնաբերել ելին Թլալատման հրվանդանը։ Նոր գիտարշավը պիտի պարզեր, թե արդյոք դա «հարավային ցամաքի» մի մասը չեր։ Յեթե այդ լենթադրությունը ճիշտ լիներ, գիտարշավը պիտի ծանոթանար տեղացիների կենցաղի, բարքերի ու սովորությունների հետ, պարզեր նրանց թիվը, և, վոր գըլխավորն եր, պիտի բարեկամական հարաբերություններ ստեղծեր նրանց հետ։ Անգլիական կառավարությունն այսպիսով հույս ուներ նոր շուկա ձեռք բերել՝ իր ապրանքների համար։

Այսուհետեւ, լեթե պաշարը բավականանար և ճանապարհորդներն ել առողջ լինելին, գիտարշավն իր ճանապարհը պիտի շարունակեր դեպի հարավ։

Հազար լոթ հարյուր լոթանասուն լերկու թվի հուլիսի կեսերին, այսինքն առաջին ճանապարհորդությունից մի ամիս հետո, կուկն, եքսպեդիցիալի գլուխն անցած,

մեկնեց Պլիմուտից: Բարեհուսո հրվանդանում նրանց միացավ բուսաբան Սպարմանը, հռչակավոր բնախույզ Լիննելի աշակերտը:

Մինչև այստեղ ճանապարհը հաջող եր: Նավերը շարունակեցին իջնել հարավ, դեպի Թլպատման հրվանդանը: Բայց ալդ նպատակին համել չկարողացան: Ճանապարհին, նոլեմբերի վերջերին, ուժգին փոթորիկ բարձրացավ: Առագաստանավերն անկարող ելին հաղթահարել նրան: Եքսպեդիցիալի նավերը դրած նպատակից այնքան հեռու ընկան, վոր ալևս անկարելի դարձավ Թլպատման հրվանդանը վորոնելը:

Վճռվեց ուղիղ դեպի հարավ գնալ: Միքանի ժամանակից հետո «Թեղոլլուշենն» ու «Աղվենչերն» ընկան լողացող սառուցների շրջանը: Յեղանակը շատ եր մառախչապատ ու խոնավ: Մառախուղը խտանում եր. հսկայական սառուցների հետ ընդհարվելու լերկուղը գնալով մեծանում եր: Այս ուժգին մառախուղի հետեանքով ել մի անախորժ դեպք պատճեց, նավից նկատեցին, վոր ծովի վրա ուժգին հոսանք կա: Ֆերստերն ու Ռեզալը նավակով գնացին հոսանքի արագությունը չափելու: Աշխատանքով տարված նրանք չնկատեցին, թե նավերը մառախուղի մեջ ինչպես աչքից կորան:

Յերբ ուշքի յեկան, նրանք սկսեցին դեպի այն կողմը թիավարել, ուր՝ նրանց կարծիքով, նավերը պիտի գտնվելին: Բայց իզուր: Նավերը մառախուղի մեջ չելին լերեւում: Ֆերստերն ու Ռեզալը դադարեցին թիավարել՝ վախենալով ավելի հեռանալ նավից: Դրությունը սարսափելի յեր: Առանց ուտելեղենի, լերկուսով մի փոքրիկ նավակում, նրանք կամ սովից պիտի մեռնելին կամ ջրում խեղղվելին: Հանկարծ զանգահարություն լսվեց, վորից քիչ հետո նավը տեսան, վորից անզգուշությամբ այնքան հեռացել ելին:

Կուկը դուրս յեկալ լողացող սառուցների դաշտից:

Նա շարունակեց ճանապարհն ալիդ դաշտի լեզրով՝ հուսալով, վոր յամաքին կհասնի: Այդ ժամանակի գիտուններն այն կարծիքի ելին, թե սառուցները գոյանում են ծոցերում ու գետաբերաններում, վորտեղից քշվում են դեպի ծովը: Սակայն բավական տարածություն անցնելուց հետո յել կուկն առաջ գնալու անցք չգտավ: Յեղանակը ցուրտ եր և փոթորկուա: Շատերն սկսեցին հիվանդանալ: Սառցելեռների արանքներով առաջ լողալը վտանգավոր դարձավ: Կուկն ստիպված յեղավ յետ դառնալ:

«Բեղովուշեն» նավը 1773 թվի փետրվարի սկզբին աչքից կորցրեց «Աղվենչեր»-ին: Կուկն իզուր տեղը միքանի որ սպասեց նրան: Նամն անհետ չքացավ և «Բեղովուշենը» հարկադրված եր մենակ առաջ գնալ:

Կուկը մի անգամ ևս փորձեց անցնել հարավալին բևեռալին շրջանից այն կողմը, սակայն անձրեները, մառախուղն ու սառցալեռներն ստիպեցին վերադառնալ: Այս փորձից հետո կուկը համոզվեց, վոր Հարավալին Սառուցալ ովկիանոսում վոչ մի ցամաք գոյություն չունի և ուղեռվեց դեպի Նոր Զելանդիա:

Այստեղ նրան պիտի սպասեր «Աղվենչերը»: Նավերը պայմանավորվել ելին իրար կորցնելու դեպքում այստեղ հանդիպել:

Նոր Զելանդիալին մոտենալիս հարավալին բևեռալին փայլ տեսան: Այս տեսարանին յելքուացիք առաջին անգամ ելին հանդիպում: Տպավորությունը շատ եր մեծ: Կուկը նրան այսպիս է նկարագրում.

«Լուսավորված տարածությունից յերկնքում ժամանակ առ ժամանակ լուսի ճառագալթներ ելին առաջանում, վորոնք կոտրափում ելին պտուտականման: Դրա հետ միաժամանակ լուսը մերթ ուժեղանում, մերթ թուլանում եր: Գիշերալին յերկնքով լուսի խրձները մի կողմից մյոււն ելին փոփում»:

Նոր Զելանդիա հասնելով, կուկն ալդտեղ գտավ «Աղ-

վենչեր»-ին, վոր Շարլոտտա թագուհու նեղուցում վեց շաբաթ նրանց եր սպասում։ Կուկի այս ճանապարհորդությունը՝ Բարեհուսովից մինչև Նոր Զելանդիա 107 որ տեղեց, Այս ամբողջ ժամանակում մեր ճանապարհորդները ցամաք չտեսան՝ նույնիսկ հեռվից։ Նավապետ Կուկը վորոշեց իր նավաստիներին հանգիստ տալ և Նոր Զելանդիակի ափերում միջանի շաբաթ մնաց։ Այս անգամ Կուկը կարողացավ տեղացիների հետ բարեկամանալ և նրանցից թարմ մթերքներ ստանալ։

Միքանի ժամանակից հետո Կուկն ու նավապետ Ֆլուրնոն վորոշեցին լողալ դեպի հարավ-արևմուտք՝ հետազոտելու Խաղաղ ովկիանոսի անհայտ մնացած մասը։

Այդտեղերում նրանք մոտ յերեք ամիս լողում ելին։ Վոչ մի հետաքրքիր բան չգտնելով, Կուկը վերադարձավ դեպի Թայիթի կղզին։ Այստեղից դեպի արևմուտք գնալով, Կուկը հսկանարերեց Եոա կղզին, վոր մոտիկ եր Ընկերության կղզիներին։ Այս կղզու բնիկներն անզիացիներին ընդունեցին շատ սիրալիք կերպով։ Նրանց առաջնորդ Տալի-Ռնեն ինքը նավ յեկավ, և վորպես նշան բարեկամության, Կուկի քիթը շոշափեց տաքտեղի թփի արձատով ու կողքին նստեց։

Նրան պարտական չմնալու համար Կուկը միքանի իշեր նվիրեց, վորոնք վալրենուն շատ ուրախացրին։

Բարեկամական նշանների այս փոխանակումից հետո, մնացիացիք ափ հրավիրվեցին, ուր նրանց պատվին մեծ խնճութ սարքվեց։

Եոա կղզուց հետո Կուկը Տոնդա-Տարու կղզու կողմը գնաց՝ թարմ մթերքներ բերելու։ Մթերք շատ հեշտ ստացավ, վորովհետև տեղացիք սիրով ելին փոխում հուլունքների, մեխերի և զանազան խաղալիքների հետ, վոր յերբեք տեսած չելին։ Կղզիների այս խմբին Կուկը Բարեկամություն անունը տվավ։

Կուկը չեր դադարում «հարավալին ցամաքի» մասին

մտածելուց։ Նա կաշվից դուրս եր գալիս հայտնաբերել ալդ ցամաքը։ Ուստի նորից նոր Զելանդիալի վրայով շարժվեց դեպի հարավ։ «Ադվենչերը» հետևեց նրան։ Մի անգամ ել սաստիկ փոթորիկ բարձրացավ և նավերն իրար կորցրին։ «Բեզոլլուշենը» մենակ գնաց ցամաքը վորոնելու։ Կուկին ընկավ լողացող սառցալեռների շրջանը։ Նրանց միջից ճեղքելով հասավ մինչև հարավային լայնության  $76^{\circ}$ , վորից հետո վճռեց յետ դառնալ։ Նա կարծում եր, վոր յեթե նույնիսկ հարավային ցամաք գոյություն ել ունի, միենալուն ե՝ հավերժական սառուցցների վրայով նրան համենին անկարելի յեւ։

Վերապարձի ճանապարհի վրա յեր ընկած Զատկական կղզին, վոր հայտնաբերել եր հոլանդացի ճանապարհորդ Ռոզգեվենը։ Կուկը խմելու ջուր չուներ, բայց և այնպես այս կղզում կանգ առնել չկարողացավ և շարունակեց առաջ գնալ դեպի Մարկիզյան կղզիները։ Ճանապարհորդելը շատ եր գժվար, վորովհետև համարյա բոլոր նավորդները, նրանց թվում նաև Կուկը, հիվանդացան։ Բայց և այնպես կուկը չուղեց Անգլիա վերադառնալ։ Նա Մարկիզյան կղզիներում միայն միքանի որ մնաց. այնուհետև վճռեց գնալ բարեկամ Թայեթի կղզին։

Կուկի ցանկությունն եր այնտեղ հանգստանալ և պաշար վերցնել։ Նրա հաշիմները ճիշտ դուրս յեկան։ Տեղացիք ընդունեցին նրան՝ վորպես իրենց հին բարեկամի, իսկ կղզու տերն յեկավ «Բեզոլլուշեն», կուկի մոտ և վորպես նվեր բերեց 10 խոզ և առատ միրգ։ Կուկն այստեղ մոտ մի ամիս հանգստացավ, հետո գնաց Բարեկամության կղզիներն, ուր հանդիպեց Որենին, վորի հետ յերբեմն ցեղալրացել եր։

Առաջ գնալով դեպի արևմուտք, նա մի շարք կղզիներ հայտնաբերեց։ Նրանց մի խումբը, ամենից մեծը, նա անվանեց նոր Հերբիտյան։

Այս ճանապարհորդության ժամանակ նավի վրա հըր-

դեհ առաջացավ։ Մեծ դժվարությամբ կրակը հանգցըին, բայց բարեբախտաբար անփորձ անցավ։

Շարունակելով իր ճանապարհը, կուկը հայտնաբերեց Կորո-Մանգո կղզին։ Այդ ժամանակ նավի խմելու ջուրը վերջացավ։ Պետք եր ջուր վերցնել։ Դրա համար անդիացիք ափ դուրս յեկան, բայց ջուր գտնել չկարողացան։ Տեղացիք դիմադրություն ցուց տվին և թույլ շտվին աղբյուրին մոտենալ։ Կուկը չուզեց զենքի դիմել և ափ իջածներին հրամայեց նավ վերադառնալ։ Նրանք հնագանդվեցին։ Տեղացիք նրանց նահանջը փախուստի տեղ ընդունեցին ու յետևներից շնկնելով, սկսեցին նրանց նավակներն ափ քաշել։ Անգլիացիք հարկադրվեցին զենքի դիմել ու միքանի վայրենի վիրավորեցին ու սպանեցին։

Ստիպված յեղան ճանապարհը շարունակել առանց ջրի պաշարի։ Բարեբախտաբար հաջորդ կղզում—Նոր Կալեղոնիա—վալրենիներն անգլիացիներին բարեկամաբար ընդունեցին և իսկույն առևտրական փոխանակություն ոկրսեցին նրանց հետ։ Այս կղզու բնիկները բոլորովին մերկ ելին, յեթե չհաշվենք այն թոկերը, վոր նրանց համար գոտիների տեղ ելին ծառալում։ Նրանք զարմանքով ելին նայում նավի վրայի խոզերին, այծերին ու մյուս կենդանիներին։ Նոր Կալեղոնիայում այդ կենդանիներից վոչ մեկը չկար։ Սպիտակ մարդ ել բնավ չելին աւեսել և զարմանքով ելին նայում նրանց մորթու գույնին։

Կուկն այստեղ շատ կարճ մնաց։ Նա նորից դեպի Նոր Զելանդիա ուղևորվեց։ Այդտեղ իրենց առաջին ճանապարհորդության ժամանակ ցանած բանջարանոցները բոլորովին ավերված գտան։ Բայց միքանի բույսեր կպել ու հրաշալի աճել ելին։

Կուկը լողաց դեպի հարավ-արևելք, դեպի ովկիանոսի այն մասը, վորտեղ դեռ չելին յեղել, այցելեց Հարավալին Գեորգիա կղզին և շարունակեց առաջ գնալ լողացող սառուցների միջով։

Յերկարատև ու հոգնեցուցիչ ճանապարհորդությունը շատ եր ծանծքացրել նավաստիներին։ Նրանք պնդում ե-լին Անգլիա վերադառնալ։ Վերադարձին, Բարեհուսո հըր-վանդանում կուկն «Աղվենչերի» մասին լուր առավ։ Նա-վապես Ֆլուրնոն մի նամակով հայտնում եր նրան իր կրած արկածների մասին։ Նավերն իրարից բաժանվելուց հետո «Աղվենչերը» հարկադրված վերադարձել եր Նոր Ջելանդիա։ Այդտեղ Ֆլուրնոն ուղարկել եր 10 նավաստի և լեյտենանաւ Բոուին՝ ուտելու բուկսեր ժողովելու։

Ուղարկված մակուկը յերկար ժամանակ չեր վերա-դարձել։ Նավապետն անհանգստանալով, յերկրորդ մա-կուկին եր ուղարկել նրանց յետեկից։ Յերկրորդ մակուկի մարդիկ ափում տեսնում են առաջին մակուկի կտորնե-րը և մոտ քսան դամբյուդ, վորոնց մեջ դարսած իրենց ընկերների խորոված մարմինների մասերը։ Նրանք հեռ-վում շատ տեղացիներ են տեսնում՝ նստուած մի մեծ խարույկի շուրջը։ Նավորդները մոտենում ու կրակ են-րացում նրանց վրա։ Վալրենիները փախչում են։ Այստեղ նրանք իրենց բարեկամների մարմնի մասերից ել են տես-նում։ Չնայելով իրենց սարսափելի զալրուկթին, նավաս-տիները չեն կարողանում իրենց ընկերների վրեժն առ-նել։ Իրենք ընդամենը տասն են լինում, իսկ տեղացիք շատ-շատ։ Բացի գրանից՝ անձրև և սկսում, վորից նրանց հրացանները կարող ելին խոնավանալ։ այդ դեպքում նրանք ևս իրենց ընկերների որը կընկնեին։ Նավաստի-ները նավ են վերադառնում, վորն իսկուն ճանապարհ-վեց գեղի Անգլիա, ուր և հասավ 1774 թվին։

Ճիշտ մի տարուց հետո «Թեզուլուշենը» ևս վերա-դարձավ Պլիմուտ։ Նրա ճանապարհորդությունը տևեց յե-րեք տարի և տասնեութ որ։ Այս նավից միայն չորս մարդ եր պակասել։

Կուկից առաջ կատարված ճանապարհորդություննե-րից վոչ մեկն այնքան հարուստ և հետաքրքիր նյութ

չտվավ, վորքան այս եքսպեդիցիան։ Կուկը վոչ միայն կղզիներ եր հայտնաբերում, այլև ուսումնասիրում եր նրանց, հնարավորին չափ ծանոթանում եր ընիկների կենցաղի հետ և ճանապարհներն ու գտած տեղերը աշխարհագրական քարտեզ եր անցնում։ Բնախույզի մասնակցությունը ևս շատ արժեքավոր բան տվավ։ Նրանք ուսումնասիրեցին մինչ այդ անհայտ մնացած շատ բուլսեր ու կենդանիներ ու ծանոթացրին ամրող Յելրոպային։

#### IV.

Վորպեսզի կարելի լիներ Անգլիալից Հնդկաստան, Զինաստան և Յապոնիա գնալ, այն ժամանակ պետք է Ատլանտյան ովկիանոսով հարավ իջնելին, Բարեհուսո հըրվանդանի մոտ պտույտ տալին Աֆրիկան և շարունակելին առաջ գնալ Հնդկական ովկիանոսով։ Ավելի կարճ ճանապարհ հայտնի չեր. իսկ սա շատ եր յերկար ու հոգնեցուցիչ։

Մինչդեռ Անգլիան հաճախ պիտի ապրանք տեղափոխեր Հնդկաստան, վոր այդ ժամանակ արդեն անգլիական գաղութ եր, Անգլիան առևտուր ուներ նաև Զինաստանի ու Յապոնիալի հետ։ Անգլիալի կառավարությունը շատ եր ուղում ավելի կարճ ճանապարհներ գտնել դեպի այս յերկրները։ Նա յենթադրում եր, վոր Ամերիկալի հյուսումք մի նեղուց պիտի լինի՝ Ատլանտյան ովկիանոսը Խաղաղականի հետ միացնող։ Մի այդպիսի նեղուց շատ կիրճատեր ճանապարհը. հարկավոր եր միայն հայտնաբերել այն։

Անգլիան 20,000 ֆունտ ( $200,000$  ռուբլի) ստերլինգ պրեմիա եր նշանակել այն ծովագնացներին, վորոնք չելին վախենալ և կհայտնաբերելին այդ նեղուցը։ Հետո յել կառավարությունը վորոշեց նույն նպատակով հատուկ եքսպեդիցիա ուղարկել։

Նոր եքսպեդիցիալի պետ պիտի նշանակվեր մի համարձակ ու փորձված մարդ: Կուկն արդեն այդպիսի ծովագնացի անուն ուներ և նշանակվեց այդ պաշտոնին: Եքսպեդիցիան լերկու նավերից եր — «Դիսկովերի» (հայտնաբերութիւն)՝ նավապետ Կերկի ղեկավարությամբ և նույն «Ռեզոլյուշենը» կուկի գլխավորությամբ:

Յերկրորդ գիտարշավը Պլիմուտից դուրս յեկավ 1776 թվի հուլիսի 12-ին: Էստ նախորոշած ծրագրի նա հասավ Բարեհուսո հրվանդանն ու կանգ առավ հանգստանալու:

Այնուհետև ճանապարհին այսպես եր լինելու. — Բարեհուսո հրվանդանից հարավ՝ դեպի այն կղզիները, վոր ֆրանսիացիք ելին հայտնաբերել. այդտեղ պետք ե հարմար նավահանդիստ ու անտառ գտնելին: Այս կղզիներում կուկը յերկար մնալ չուզեց: Դեռ առջեւում եր նոր Զելանդիան, ուր հույս ուներ լավ հարաբերություններ ստեղծել ինչպես այդ կղզու, այնպես ել դբանից դենն ընկած կղզիների ընիկների հետ: Դրա համար նա շատ ընծաներ եր տանում: Նոր Զելանդիայից «Ռեզոլյուշենը» և «Դիսկովերի» պիտի պատ տային Հյուսիսային Ամերիկայի արևմտյան ափը և Հուդզոնի կամ Բաֆինի ծոցով դուրս գալին Ատլանտյան ովկիանոսն, իսկ այդտեղից ել լիտ՝ դեպի Անգլիա: Յեթե Ամերիկայից Ատլանտյան ովկիանոսով ճանապարհ չլիներ, վորոշված եր Կամչատկայում հանգստանալուց հետո վերադառնալ տուն: Պետք եր վերադարձի այնպիսի ճանապարհ ընտրել, վոր ավելի ոգտակար լիներ աշխարհագրության և ծովագնացության համար:

Այս պլանով ղեկավարվելով, կուկը թողեց Բարեհուսո հրվանդանը և ուղևորվեց դեպի կղզիները: Նա լավ նավահանդիստ գտավ, սակայն կղզիներում վոչ մի անտառ չկար: Կղզիները հետազոտելով, կուկը գնաց նոր Զելանդիա, ուր այնպես վողբերգական կերպով կորան «Աղվենչերի» նավաստիները: Հենց վոր նավերն ափին մոտեցան, նրանց շրջապատեց ընիկների մի խումբ: Բայց վոչ մի

նորզելանդացի չհամաձայնեց նավը բարձրանալ: Այդ անվստահության պատճառը շատ շուտ պարզվեց: Բնիկները կարծում ելին, թե կուկը վերադարձել է՝ իր բարեկամների վրեժն առնելու: Նա մեծ դժվարությամբ կարողացավ համոզել, վոր ինքը ամենախաղաղ ցանկություններով ելեկել: Այդ բանում շատ ոգնեցին ընծաները, վոր նու առատորեն բաժանում եր:

Մեր ճանապարհորդները նոր Զելանդիայում քիչ մնացին, բայց դրա փոխարեն կուկն իմացավ «Աղվենչեր» ի նավաստիների սպանության պատճառը: Դա այսպես եր կատարվել. նավաստիները նստում են ընթրելու: Այդ ժամանակ նրանց շրջապատում են նորզելանդացիների մի խումբ, վորոնց սիրտը նույնպես հաց ու ձուկն եռ ուղում: Բնիկներից մի քանիսը մթերքների մի մասը գողանում են: Նավաստիներն սկսում են ծեծել գողերին: Այստեղից տուր ու դմիոց ե սկսվում, վորի ժամանակ նավաստիներից մեկը յերկու անգամ կրակում ե: Տեղացիք կատաղում են, և վորովհետև նրանք անհամեմատ ավելի շատ են լինում, քան անգլիացիք, ուստի նրանց բոլորին ել զինաթափում ու կոտորում են: Բարեկամական հարաբերություն պահպանած լինելու համար կուկը վճռեց այս հարցի շուրջն ալլես չխոսել և նորզելանդացիներից բարեկամ բաժանվեց:

Ճանապարհորդությունը շարունակվեց և նավորդները մոտեցան Բարեկամության կղզիներին: Այս բոլորը ծանոթ տեղեր ելին, ծանոթ աղօքաբնակությամբ, վորոնք նորեկներին սիրով ընդունեցին: Բարեկամության բոլոր կղզիների տեր Ֆենուն ոգնեց կուկին՝ կենսամթերք գտնելու: Նավերն այստեղից լողացին դեպի Թալիթի կղզին:

Ճանապարհորդությունը մինչև այստեղ հաջող եր ընթանում, բայց այստեղ խիստ փոթորիկ բարձրացավ, վորից «Դիսկովերին» մեծ զսառվածքներ ստացավ: Սփառված յեղան մի ամսից ավելի մեալ Թալիթի կղզում, կուկը

շարունակ այն եր ասում, թե ինքը դեռ ճանապարհորդությունը չի սկսել, վորովհետև մինչ որս, ուրեմն ամբողջ 17 ամիս, գեռ ծանոթ վալրերում են լողում: Հիմա յեւ, վոր պիտի անցնեն եքսպեդիցիալի հիմնական նպատակն իրագործելուն: Ակսվում ելին Մեծ ովկիանոսի հյուսալին մասի ուսումնասիրությունը և Անգլիալից Ասիա տանող ամենակարճ ճանապարհ գտնելու փորձերը:

Եքսպեդիցիան Բնկերության կղզիներից ճանապարհվեց գեղի հյուսափական մի ամբողջ ամիս վոչ մի ցամաք չելին տեսնում: Վերջապես կղզիների մի խումբ էրեւաց, վորին բնիկները Հավալի ելին անվանում: Կուկը նրանց Անգլիայան կղզիներ անվանեց — ծովալին վարչության առաջին լորդ Սանդվիչի պատվին:

Այս կղզիների բնակիչների լեզուն համարյա չեր տարբերվում թալիթցիների լեզվից. այնպիս վոր Կուկը նրանց հետ շատ հեշտ եր բանակցում: Ճանապարհորդների և տեղացիների հարաբերությունները շատ շուտ լավացան և մեր նախորդները վճռեցին մոտիկից ծանօթանալ նրանց կենցաղի հետ: Հավալի կղզիների բնակիչները լավ կազմվածք ունելին, շատ ել ճարպիկ ելին: Անգլիացիներին առանձնապես զարմացնում եր նրանց լողալու շնորհքը՝ մանավանդ խիստ փոթորկի ժամանակ: Կուկը մի շատ հետաքրքիր դեպք և պատմում իրեւ որինակ: — մի կին, ասում ենա, յերեխան ձեռքին չեր կարողանում նավակով ափին մոտենալ: Նրան խանգարում ելին բավական մեծ ալիքները: Այդ ժամանակ նա, առանց ձեռքից թողնելու յերեխալին, ջուրն ընկավ և լողալով անփորձ հասավ ափը:

Բնախույզ Անգլերսնը և նկարիչ Վերերը ուղևորվեցին գեղակի կղզու խորքերը: Նրանց պատմելով հավալցիների և թալիթցիների կյանքն իրար շատ ենման: Այս յերկու ցեղերն, անշուշտ, մի ծագում ունեն՝ չնայած նրանց իրարից բաժանող անագին տարածությանը: Բայց և այնպիս ճանապարհորդները գտան, վոր Ովկիանիալի բնակիչ-

ներից ամենից կուլտուրականը հավալցիներն են։ Նրանք շատ լավ լերկրագործներ ելին և անհամեմատ ավելի լուրջ, խելացի ու աշխատասեր ելին, բան թալիթցիները։

Եքսպեղիցիան Սանդվիչյան կղզիներում մնաց մինչև փետրվար, վորից հետո Ամերիկայի արևմտյան ափով ուղևորվեց դեպի արևելք։ Բավական լերկար ժամանակ կուկը սիրտ չեր անում ափին մոտենալ։ Յեղանակը վատ եր, մառախլապատ, ուստի ափին մոտենալն այնքան ել անվտանգ չեր։ Բայց խմելու ջրի պաշարը վերջանալու վրա լեր. անհրաժեշտ եր լրացնել։

Կուկը վորոշեց կանգ առնել մի ծովախորշում, վորին «Հույսի ծովախորշ» անունը տվավ։ Այստեղ նրանց իսկույն տեղացիներ մոտեցան՝ լերեք նավակով։ Նավակներից մեկում կանգնած եր մի հնդիկ՝ գաղանի մորթի հագած, և ինչ վոր բան եր ասում։ Նրա նշանացի խոսակցությունից ու շարժումներից անգլիացիք հասկացան, վոր իրենց հրավիրում են ափ դուրս գալ։

Ահա թե կուկն ինչպես ե նկարագրում ալդ դեպքը։ «Վայրենին, վոր ճառ եր ասում, գաղանի մորթի լեր հագել ու փայտից փորած մի շարան ուներ ձեռքին։ Իր լերկար ճառի ընթացքում, վորից, իհարկե, մենք վոչինչ չհասկացանք, նա հաճախ իր ձեռքի շարանն եր թափահարում։ Վերջապես շատ խոսելուց նա հոգնեց ու նավակում նստեց, վոր հանգստանա։ Յերկու նոր հնդիկներ անցան նրա տեղը։ Մրանց ճառն այնքան ել լերկար չեր։ Նրանք ավելի հանգիստ ելին խոսում։ Բնիկներից շատերի լերեսները ներկած ելին բավական տարրորինակ կերպով։ Դլուխները կարդարված ելին թռչունների փետուրներով։ Չնայած մեր հրավերին, նրանցից վոչ վոք սիրա չարավ տախտակամած բարձրանալ։»

Նավերի հանգստի ու նորոգման ժամանակ անգլիացիների և տեղացիների մեջ ապրանքների փոխանակություն սկսվեց։ Առուծախսի ժամանակ բնիկները շատ

ելին ազնիվ, սակայն սա չեր խանգարում, վոր առևտրից հետո մի բան գողանալին։ Այս տեսակետից նրանք ել նույնն ելին, ինչ վոր մըուս վալրենիները։ — սեփականության հասկացողությունը նրանցում բացակայում եր։

Մի փոքր ժամանակից հետո «Հուլս» ծովախորշից դուրս գալով, եքսպեդիցիան ուղևորվեց դեպի հյուսիս՝ Հյուսիսային Ամերիկայի ափերով։ Ճանապարհին Կուկը աշխարհագրական քարտեզում գծադրեց Հյուսիսային Ամերիկայի մինչեւն նրա ժամանակն անհայտ համարված արևմտյան ափը։ Առաջ շարժվելով, Կուկը մի կղզի հայտնաբերեց, վորին Թագավորական անսւնը տվավ, այստեղից հասավ իշխան Ռւելսի հրվանդանին։ Այս հրվանդանն ամերիկան ցամաքի ամենաարևմտյան ծայրն ե։

Կուկը 1778 թ. ոգոստոսի 17-ին անցավ Ասիան Ամերիկայից բաժանող նեղուցը, վորին Բերինգի անունը տվավ, և հասավ հյուսիսային լայնության 70°-ին։ Այսուհետեւ անսահման սառցային դաշտ եր սկսվում։ Վեր բարձրանալու համար նավերը մի ամբողջ ամիս վորսե ջրանցք ելին փնտուում, բայց վոչ մի նեղուց չգտան։ Դրությունը վտանգավոր եր դառնուում, վորովիետե լողացող սառուցները կարող ելին ջարդ ու փշուր անել նավերը։ Կուկը վճռեց վերադառնալ և ձմեռել Սանդվիչյան կղզիներում։ Մտածում եր հաջորդ ամառը նորից գալ և վորոնումները շարունակել։

Մի ամբողջ ամիս լողալուց հետո միայն նավերը նկատեցին Սանդվիչյան կղզիներից առաջինը՝ Մովեեն։ Այստեղ Կուկը մեծ քանակությամբ պաշար վերցրեց և ուղևորվեց դեպի Հավայի։

Կուկի վերադարձը տեղացիք մեծ հանդիսով ընդունեցին։ Գերագույն քուրմ Կուան նրա ուսերին կարմիր ծիրանի գցեց ու ընդարձակ ճառ արտասանեց։ Կուկը մնացել եր զարմացած և ուզում եր իմանալ, թե ինչ ե նշանակում այս բոլորը։ Պարզվեց, վոր Հավայի կղզու ընա-

կիշները հավատում են Ո-Ռոնի ասածուն, վոր լեռքեմն ապրել ե ալդտեղ: Նա խանդից սպանել ե իր կնոջը, վորը բոլորովին անմեղ ե լեղել: Ո-Ռոնին հետո իմանալով իր սխալը, կսկծից խելագարվել ու սկսել ե թափառել կղզում ու սպանել պատահողներին: Հետո հեռացել ե, խոստանալով վերադառնալ լողացող կղզու վրա նստած: Յեվ ալժմ տեղացիք կուկին ալդ աստծու տեղ ելին ընդունում:

Քուրմն ամբողջ ժողովրդին հայտնեց, վոր կուկն Ո-Ռոնի աստվածն ինքն ե և խնդրեց ափ իջնել: Կուկը համաձայնեց: Նրա առաջից գնում ելին չորս գավազնակիր հավալցիներ, իսկ մնացածները կամ փախչում, կամ նրա առաջ գետին ելին փովում: Կուկին հասցըին մի մեծ տաճար՝ սպիտակ կամարներով: Տաճարը շրջապատած եր ցցապարսպով, վօրի վրա մարդկային գանգեր ելին լերեվում: Դրանք այն զոհերն ելին, վորոնք մատուցվել ելին աստվածներին: Տաճարի ներսում, ուր առաջնորդեցին կուկին, աստվածների փայտե արձաններ ելին՝ սարսափելի դեմքերով: Գերագույն քուրմը խնդրեց կուկին՝ բարձրանալ փայտե պատվանդանի վրա, վորտեղ նրան կարմիր ծիրանիով ծածկեց: Տաճարում զտնված քուրմերը սրբազն ներբողներ ելին լերգում: Այս ծիսակատարությունից հետո կուկին լետ տարան նավը և հետը վարվում ելին՝ վորպես իսկական աստծու հետ:

Կուկը չփորձեց խախտել տեղացիների այս հավատը, վորովհետև կարծում եր, թե այսպիսով ամբողջ եքսպեդիցիան անփորձ կլինի, բայց իրականում հակառակը դուրս յեկավ: Ո-Ռոնե աստծու հրաշափառ հայտնությունը պատճառ դարձավ, վոր քրմերի հարգը ժողովրդի աշքում շատ բարձրանա: Սա բնավ հաճելի չեղավ զինվորականներին, վորոնք չելին ուղում կորցըել իրենց ազգեցությունը: Այդ ժամանակ նրանք սկսեցին ստուգել, թե արդարե կուկն աստված ե: Սրա համար նրանք նավ ուղարկեցին իրենց

դիմավոր առաջնորդ Տարախ-Ռպուխն։ Կուկը նրան շատ լավ ընդունեց, ցուց տվավ նավը, ծանոթացրեց նավաստիների հետ։ Առաջնորդը մեծ ուշադրությամբ դիտեց ամեն ինչ և գտավ, վոր այս սպիտակ մարդիկ հասարակ մահկանացուներ են։ Այս քանում նրան համոզեցին նավաստիների հոգնած տեսքը և մանավանդ կուկի պաշար ճարելու մեծ ցանկությունը։

Ափի իջնելով, առաջնորդն այս բոլորը պատմեց զինվորներին։ Այսինչ՝ թարմ մթերքների ու պտուղների մեծ պաշար ստանալով, կուկը փետրվարի սկզբին դուրս լեկավ Կարականցա ծովախորշից։ Բայց այդ ժամանակ այնպիսի ստրափելի փոթորիկ բարձրացավ, վոր ստիպված լեղավ լետ դառնալ։ Վերադառնալուն պես անգիրացիք նկատեցին, վոր այս անդամ տեղացիների վերաբերմունքը բոլորովին այլ է։ Փոխանակ բարեկամական վերաբերմունքի ու հարգանքի, նրանք կասկածու, նույնիսկ թշնամաբար ելին պահում իրենց։ Որինակ, միքանի առաջնորդներ տեղացիներին թույլ չելին տալիս, վոր նավաստիների տակառները ջրով լցնեն։ Մի հավալցի լել «Դիսկովերից» աքցան ու դուր գողացավ ու ընկավ ծովը։ Նավակով ընկան նրա լետելից, սակայն հավալցին թուավ ընկավ բարդարան ու թիւվարելով, ափի հասավ։ Ճիշտ ե. առաջնորդներից մեկը գողացած իրերը շուտով լետ բերեց, սակայն նավակն ու փախստականին հանձնելուց հրաժարվեց։ Անզլիացիք փորձեցին նավակն ուժով վերցնել, սակայն հավալցիք քարեր առած ընկան նավաստիների վրա։

Կուկը վճռեց, վոր լեթե մի լավ չիրաաի տեղացիներին, նրանք այլևս իրենից չեն վախենալ և ամրող եքսպեդիցիան կվտանգվի։ Անհրաժեշտ եր, վոր իր ազդեցությունը վերականգներ։ Այս նպատակով կուկը վորոշեց մինչև նավակը վերադարձնելը՝ պատանդ վերցնել գլխավոր առաջնորդ Տարախ-Ռպուխն և փոքրիկ խումբ զինվորներով ափ դուրս լեկավ։ Տարախ-Ռպուխ հանձն առավ նավ գնալ։

Բայց հենց այն ժամանակ, լեռը նա նավակ եր նստում, վրա հտապավ նրա կանանցից մեկն ու խնդրեց չգնալ, նա լալով հայտնեց, վոր լեթե Տարալի-Ռազուն գնա, փորձանք կդա: Անդիացիներին շրջապատեցին զինված հավալցիներ: Նրանց շրջանում լուր տարածվեց, թե անգլիացիք մի հավալցի առաջնորդ են սպանել:

Կուկը նկատեց, վոր բնիկների կատաղությունն ամեն բովեւ կարող ե պալթել, և ուզելով խուսափել արյունհեղությունից, նավաստիներին հրամայեց անմիջապես նավ վերադառնալ: Կուկը նավակին մոտեցավ թե չե, նրան գաղտուկ մոտեցավ մի տեղացի և ուզեց դաշույնով խփել: Կուկը կարողացավ ժամանակին շուռ գալ և կրակել նրա վրա իր հրացանից, վոր լցրած եր կոտորակով: Բայց հավալցին անմնաս մնաց, վորովիետե նրա կուրծքը ծածկած եր խիտ փսխաթով: Նա մի անգամ ևս դաշույնով ընկավ կուկի վրա: Այդ ժամանակ նավաստիներից մեկը նրան տեղն ու տեղը հրացանազարկ արագ: Տեղացիք իրենց ընկերոջ մահը տեսնելով, կատաղեցին ու կուկի վրա ընկան: Նավակում դժոնվող նավաստիները, նպատակ ունենալով փրկել իրենց սիրած պետին, կրակ բացին: Կուկը հրամայեց կրակը դադարեցնել, նա կռվից եր խուսափում: Նա հրամայեց, վոր նավակները՝ վորքան կարելի լե, մոտեցնեն ափին: Նավակներից մեկն իսկույն հրամանը կատարեց, իսկ մյուսը կուկին չհասկացավ և ափից հեռացավ: Հավալցիք այս սխալից ոգտվեցին: Նրանք ափում դժոնված բոլոր նավաստիներին քշեցին դեպի այդ միակ նավակն: Ափում մնաց միայն կուկը:

Ամեն կողմից հարձակվող ամբոխից պաշտպանվելով, կուկն արդեն մոտեցել եր նավակին, լեռը հավալցիներից մեկը տեղով խփեց նրա ծոծրակին: Կուկը հարվածից հետո ուշքի լեկավ, բարձրացավ և սկսեց նահանջել: բայց այդ ժամանակ մի ուրիշ տեղացի նրա պարանոցին խփեց դաշույնով: Կուկը մեկ ել ընկավ, բայց այս անգամ ար-

դեն՝ ջուրը։ Նա դեռ վեր կենալու ուժ ուներ, բայց հավալցիք աշխատեցին ջրահեղձ անել նրան։ Նա մի անդամ ել փորձեց ազատվել, սակայն տեղի մի ուժգին հարված շամփրեց նրան։ Մեծ ծովագնացի կրանքի թելը կտրվեց։

Կուկից դեռ շատ բան կարելի յեր սպասել, բայց այն ել, ինչ վոր կարողացավ, անել, ապշեցնում ե մեզ իր նվաճումներով։ Կուկն ուսումնասիրեց Խաղաղ ովկիանոսի հարավային ափերը, ուսումնասիրեց ու աշխարհագրական քարտեզ անցրեց բազմաթիվ կղզիներ, վորոնց թվում նոր կալեղոնիան ու Սանդվիչյան կղզիները։ Նրա արշավախրմբերը բուսաբանական, կենդանաբանական ու ազգագրական ահագին նլութ՝ ժողովեցին։ Նա ապացուցեց, վոր ամբողջ ովկիանոսում միասնական պոլինեզիական ցեղն և ապրում։ Վերջապես Կուկը պարզեց, վոր հարավային մայր ցամաք գոյություն չունի, իսկ նոր Գվինեան և նոր Զելանդիան կղզիներ են, վոր վոչ մի կապ չունեն Ավստրալիայի հետ։

Նրա ուսումնասիրություններն ու հայտնաբերումները համամարդկային նշանակություն ունեն, մի բան, վոր խոստովանում ե ամբողջ աշխարհը։ Այդ ժամանակ նույնիսկ ֆրանսիան, վոր պատերազմ ուներ Անգլիայի հետ, հատուկ հրաման տվավ, վորով արգելվում եր ֆրանսիական նավերին՝ վորևե կերպ խանգարել Կուկի արշավախմբին։ Ահա այսքան համամարդկային եր նրա գործունելությունը։ Մարդը նվաճեց յերկիրը և այդ նվաճման պատմության մեջ Կուկի անունն անմահ ե։

Կուկը չբավոր գլուղացու վորդի յեր։ Նա իր կրանքի ճանապարհն սկսեց նավասենյակի սպասավորի պաշտոնից և համաշխարհային հոչակ ստացավ՝ շնորհիվ իր ուժեղ կամքի, արիության և պրապտուն խելքի։ Բայց իր փառքի գագաթնակետին ել նա չմոռացավ այն դժվարին ճանա-

պարհը, վորով անցել եր: Նա նավաստիների բոլոր կարիք-ները գիտեր, հոգում եր նրանց մասին և գրավել եր նրանց սերն ու անձնվիրությունը:

Նավապետ Կուկը վոչ միայն մեծ ծովագնաց, ալև  
մեծ մարդ եր:




Հենրի Ստենլիի կլանքն ու արկածները

3

Զեմս Կուկի կլանքն ու արկածները.

41



(304.)

գԱՆ ՀԻմնարար Գիտ. Օրադ.



220039514

A  
395IV